

## ՊԱՏԻՄԱՔԻՏԱԿԱՆ

Հրատարակելով Մանուէլ վարդապետ Կիւմիւշխանացու հետաքրքրական պատմութիւնը՝ պարտ ենք համարում յայտնել՝ որ այդ անուամ ենք իրեն Մանուէլ վարդապետի մայր ձեռագիր օրինակից, որը մենք ստացել ենք Նոր-Ջուղայի նախկին առաջնորդ Սաշատուր վարդապետից, այժմ հանգուցեալ, 1896 թուին, երբ նա գործով եկել էր ս. էջմիածին: Այդ թուին մենք սարկաւազ էինք, Ղուկաս անունով: Հրատարակելով Սաքել վարդապետ Գալիփեցու պատմութիւնը (Գ. տպագրութիւն), Տ. Սաշատուր վարդապետը սիրալիր կերպով մեզ յանձնեց Մանուէլ վարդապետ Կիւմիւշխանացու ինքնաձեռագիր պատմութիւնը, և խնդրեց որ այդ պատմութիւնը ևս հրատարակենք: Իր ժրտարար հանգուցեալ Տ. Սաշատուր վարդապետն ինձ շատաց՝ թէ ինքն սրտեղից է ձեռք բերել այդ պատմութիւնը, այլ միայն խորհրդաւոր կերպով յայտնեց՝ թէ «Հայր սարկաւազ, իմացէք, որ իրեն Մանուէլ վարդապետի ինքնաձեռագիրն է և ոչ թէ արտագրութիւն ուրիշի ձեռքով, երկար ժամանակ ինձ մօտ էր և այժմ տեսնելով որ դուք սէր ունէք այդպիսի պատմութեանց հրատարակութեան, ձեզ եմ յանձնում և խնդրում որ հրատարակէք»: Ա. էջմիածնի մատենադարանում կայ մի օրինակ Մանուէլ վարդապետ Կիւմիւշխանացու պատմութեան՝ որ արտագրուած է ուրիշի ձեռքով և ոչ թէ ինքնաձեռագիր է, թէ արդեօք մայր ձեռագրից է արտագրուած և կամ այլ օրինակից, մենք հնարաւորութիւն չունեցանք ներկայումս ստուգելու, որովհետև Մայր Աթոռի մատենադարանի ձեռագիրներն առ այժմ տեղափոխուած են Մոսկուա:

Արժանապատիւ Տ. Գիւլա ա. քահանան, որ մտադիր է հրատարակել «Գիւլան Հայոց պատմութեան» շարքում

Մանուէլ վարդապետի պատմութիւնը, ընդօրինակել է տուել Մ. Աթոռի մատենադարանի օրինակից, ինչպէս մեզ յայտնել է հանդուցեալ Մակար եպիսկոպոս Բարխուդարեանը, որի միջոցով էլ արտագրել է տուել Տ. Քիւտ աւագ քահանան իւր մօտ եղած Մանուէլ վարդապետի պատմութիւնը:

Թէ յիրաւի մեր հրատարակութիւնը անուժ ենք մայր ձեռագրից՝ գրուած իրեն հեղինակի ձեռքով՝ այդ մենք հաստատում ենք՝ համեմատելով գրութեան ձևը հեղինակի այլ ձեռագիր գրութեանց հետ՝ որոնք գրուած են նոյն ձեռքով: Այս և ահասարակ հեղինակի մասին կը խօսենք մեր յառաջաբանի մէջ, կցուած պատմութեանս հրատարակութեան՝ որ «Արարատ»ից արտատպելով լոյս կընծայենք առանձին գրքով:

Ձեռագիրը գրուած է կապոյտ հասա թղթի վրայ 17×22 մեծութեամբ նօտր գրով և ունի 158 էջ:

Հեղինակի ուղղագրութիւնը պահպանել ենք նոյնութեամբ:

Բարգէն վարդապետ Աղաւկեանց

ՀԱՄԵԹՅՈՒԹԻՒՆ ԺՆՆԻԷԼՆ ԵՒ ԳԻՊՈՒԼԺՈՅ  
ՄԵՆՈՒԷԼ ՇԱՀԻՆԵԼՆ ԿԻԻՄԻՆՇԵԼՆ ԵՆՏԻ ՊԵՏՐԱՅԵԱՆԻԹ  
1835 Ի ՍՈՒՐԲ ԽԵԶ ՎԵՆՍ ՂՐԻՄՈՅ.

Զառքը են Հայրենիք, և արաւել քաղցը Հայրենեացն քացատրութիւնք, վասն որոյ մոռացութեամբ հասակիս անծեռնտութիւն և մատանցս դողդոջութիւն, համառօտութեամբ յընդարձակ նախաձեռեալ անձնական դրութիւնէս՝ որ ի 1830 ամի Տեառն ի Սեւան կղզի սկսեալ, և ի կղզին Ղրիմու աւարտեալ էի, կամ ևղև ինձ գիտի հարկաւորսն ժողովեալ աստ, զի անձանձրոյթ զքօսարան լիցի քանասէր ընթերթանաց:

Ուստի զայս համառօտութիւն յերկուս հատուածս քաժանեմք, առաջինն, որ նկարէ զուստն մարմնական Ար-

մատոյն խնոյ, զծնունդ եւ զարգացումն անձնական հանդերձ  
դիպուածովք միոշի գնալն ի Թիֆլիզ:

Նրկորդն յանդիման կացուցանել զմնյաջող դիպուածսն,  
որք շարունակեցին առ տարարաղչ անձն իմ, ընդ որս  
բարք եւ տիպք Մոտոյին Հոգեւորականաց:

### ՏԵՂԻՔ ԾՆՈՂԱՅՆ ԻՄՈՅ, ՅՈՐՈՅ ԵՒ ԵՍ:

Վճռափակեալ է ի բանասիրաց կերպ, ժամանակ, ձև եւ տեղի,  
անուն, արիւն, եւ Հայրենի, եօթն սոքա խմբին ի մի, զորս սասար  
որ չընդունի: Վասն որոյ պարտ է զառաջինն զՀայրենին մեր  
դիպուածովքն առաջի աննել, եւ ապա ի ծառայն զընծիւղն:

Մանդական երկիրն իմ Մայրենեօք է քաղաքն Կիւմիշխա-  
նայ, մերձ քաղաքին Տրապիզոնու, ի Մեծին Հայոց, իսկ Հայրե-  
նեօք ի Զորբորդ Հայոց ի Բալու քաղաքէ:

Անուն Հօր իմոյ Մալխաս Շահինեան, եւ անուն Մօր Պէկղաս  
Ստեփանովայ Ալթունեան:

### Պատահարի այս ծնողացս.

Փորձութիւնք են յաշխարհի կեանք մարդկանց: Մալխաս  
Շահինեան Հայրն իմ, զառաջինն ի Բալու քաղաքի ըստ օրին  
Ամուրեաց ամուսնացեալ ընդ ուրումն օրիորդի Մարիամ Պետրո-  
սովայի, յորմէ ծնեալ դարու Շահան անուամբ որդի մի ըստ  
նախնական կոչմանց: Հասեալ մանկանն երկամեայ ժամանակի,  
դէպ լինի Հօրն գնալ զօրծով ի մերձակայ դուռս կամ դիւղ, կին  
նորա Մարիամն, ունելով զաղքատ ծնօղս անդ ի Բալու, եւ տարին  
սղութեան պատահելով, վասն այցելութեան ծնողացն, թողեալ  
զերկամեայ Շահան երեխայն ի տան ատընթեր հրավառ օճախ  
խարոյկի՝ թարց այլ չափահաս պաշտպանի, առեալ զկարեօր պա-  
րէնս պիտոյից՝ տանի առ ծնօղսն, թերևս ըստ կանացի զատար-  
կարանութեանց պարատմամբ յերկարեալ անդ, կայծ ի կըրակեաղէ  
ցայթմամբ շօշափէ զհանդերձ Մանուկ Շահանի, եւ հասանի ի  
մարմին անպաշտպան երեխային, որոյ ափս ի թերսղ սաս անդ  
զեզերմամբ անկանի ի թոնիր անհուր, բայց ի ծխոյ եւ ի հրոյ  
հանդերձիցն մեռանի անդանօր:

Մայր նորա Մարիամ լուեալ զայս տարարաղղ դիպուած  
զաւակին, յերկիւղէ առն եւ աղգայնաց ոչ վերադառնայ ի տուն  
իւր, այլ աղգայինք Մալխասին եւ դրացիք թաղեալ զերեխան  
զՇահան եւ պահպանեն զտունն:

Եկեալ Մալխաս Շահինեանի, ծանօթացեալ անակնունելի դիպուածոյն և կնոջն արարց, գնայ յօտարութիւն անդարձ աստանդակ, շրջելով ցերկոտասան ամս. հասանի ի Մայրենի յերկիր մեր ի Կիւմիշխանայ:

### Եւ դիպուածք Պէկզաս Մօր իմոյ:

Արդ որպէս նկարեցաւ տարարադղութիւն Հայրական գծիս, ծրեսցի և մայրականիս համակշիռ անյաջողակ դիպուածքն: Զի Մայրն իմ Պէկզաս Ստեփանովնայ Ալթունեանն, օրիորդ ամուսնացեալ յառաջագոյն ընդ ումեմն Յակոբ Յովհաննէսովի, կացեալ ընդ նմա պակաս քան զվեց ամիսսն, հարկեալ յաղքատութենէ Յակոբ անն իւրոյ, գնայ յօտարութիւն և նա անդարձ, յղացեալ Պէկզասն, ծնանի դուստր մի Հռիփսիմէ անուն, հասեալ աղջկանն երկօտասան ամ կենաց, մեռանի անհայր: Ահա այսպիսի համօրինակ տարարադղք պատահմամբ իրերաց Շահինեանն և Ալթունեանն տարաշխարհիկ՝ ամուսնացեալք օրինօք ի Կիւմիշխանայ, յորոց ծնանիմ միայնակ որդի առաջին և վերջին, քանզի չէ յարուցեալ այլ ծնունդ նոցա:

### Յաջողակ ծննդեան. Անյաջող կեանք:

Յայս ունակ տարարադղ դուգակցաց՝ ի հազար եօթն հարիւր վաթսուն և ութն փրկչական ամի և ի հազար երկերիւր տասն և եօթն հայկականիս Տօմարի՝ յաւարտ հին տարւոյն, և ի սկիզբն հետեօրդին, ի գիշերին որ լուսանայր օր շաբաթու նոր տարւոյն յունվարի մէկ՝ լինի հազուալուր ծնունդն իմ, յորում աւուր տարարադղ իմ ծնողք համարեալ զինքեանս իսկ և իսկ անդաւակացեալք:

Վասն զի յիջանելն իմ յերկիր՝ ոչ ունի տարրկանն յօդք ներադղումն առ իս, որով առնուլ զշունչ և զհասարակացն բարբառ միասլէս լալ: Այլ նիհար, աղաղուն, շնչասպառ, անկենդան փարեալ զերկրաւ, մնալով ոգիական դօրութեանց և պարարտութեանցս առ թաղանթն իմ ընկեր կոչեցեալ:

Հմտագոյն ճարտարութիւն մանկարարձ դաեակ մօր Ղուարէթ անուանելոյ և օժանդակութիւն ձմեռնային եղանակի՝ յոր կրակետղ Մանդալն պատրաստ պատահեալ, առանց հատման պօրտոյ աղեացս թաղանթ զընկերն իմ եղեալ ի կրակետղն, որպէս դատինս կովուց զՀատեալ զաղիս անդադար մըղեալ ի թաղանթէն զէպի պօրտն անձայն դիակիս՝ յերկար ժամս, որ բռնութեամբ հրոյն գալարեալ պարարտ թաղանթն, հուսկ ապա իբր

հրաշիւք արձակեալ եմ զիմ ձայն, առ ժամայն դայիակ մօր հա-  
տեալ զաւելորդ աղին, գիշերայն հասուցանեն Սուրբ Աստուա-  
ծածնի յեկեղեցին, Չախուճեանց Մարտիրոսն կացեալ կնքահայր  
և սրբասնունդ Տէր Յարութիւն Մկրտեալ, անուանակոչեն Մայ-  
րական գծիւ Ստեփաննոս, որոց ոչ էր ծանօթ Հայրականիս վեր-  
տառութիւն Շահան: Եւ ահա յայս օրինակ թուցեալ զբարե-  
պատեհ ժամն զայն զոնէ յետ սուրբ աւագանի ծննդեանս, կամ  
տատանեալ յալիս մեղաց և աշխարհի:

Առ այս դարձուածք է ուրեք որ ստորագրեալ եմ Մայրա-  
կան գծիւ Ալթունեան և է ուրեք Հայրականու՝ Շահինեան, յու-  
սամ յետ այսորիկ ընթերցողք ստորագրութեանցս ըստ յայտ-  
նեալ պատճառացս ներողամիտ դտանիցին առ այն:

### ԱՐ ԵՎ յԱՐՈ՛Ց զԱՍՏԻԱՐԱԿԵՅԱՅ:

Յերկիր ծննդեան իմոյ, երբ Մանուկն էի եօթն ամեայ, Հայրն  
իմ յօտարութեան շրջելով յերկիր, Մայրն իմ ետ զիս առ Սուրբ  
Աստուածածնի եկեղեցւոյն յուսարար և մանկավարժ Յարութիւն  
սարկաւազն, յորմէ հազիւ սկսեալ զՀեգակազմութիւն, պատահե-  
ցաւ մեզ ընտանեօք դնալ ի Կարին յէրզիւրում քաղաք, զի Հայրն  
իմ էր ի պաշտօն Մաքսապետին, ուր ևս ետուն զիս ումեմն խա-  
նութպան Թիթիւնճի Պետրոսի ի Կեօլպազր ասացեալ տեղին յըն-  
թեանու՝ զի բնակեալ տուն մեր՝ մերձ էր անդ հանդէպ կեօմ-  
րիւկին:

Եւ աստ մինչ ընթեանուի զՍաղմոսն ինն ամեայ հասակիս,  
վերադարձաք ընտանեօք յերկիր մեր ի Կիւմիշխանայ, ուրանօր  
զբացւոյ մերոյ պախալ Գէորգի ինձ հասակակից որդի մի էր  
Յովհաննէս անուն, ընդ որոյ վերստին առ առաջին վարժիչն իմ  
Յարութիւն սարկաւազն՝ երթեալ ընթեանուաք, քայց Հայրն իմ  
ևս վերադարձեալ ի Կարին, մեռանի անդ ի հազար եօթն հարիւր  
ութսուն ամի Տեառն յերկոտասան ամեայ հասակի իմոյ:

Հարկեալ յանտիրացեալ աղքատութենէ, թողեալ զընթեր-  
ցումն, աշակերտեցայ ոստայնագործ Չուլահակ Համբարձում Պօ-  
ղոսովի ամս երկու: Սակայն համշիրակն իմ Յօհաննէս շարունա-  
կեալ զընթերցումն յառաջագէմ գտաւ յայս յարգելի անձանց,  
մանաւանդ Առաջնորդի քաղաքին, որ կամէր աշակերտեցուցանել  
ինքեան: Սակայն աչք Գէորգայ՝ հօրն Յօհաննու կացեալ ի տե-  
սութենէ, ոչ կարաց հեռանալ Յօհաննէսն ի հօրէ իւրմէ:

Այլ իմ նախանձեալ զնախանձ բարի նոյն Յօհաննէս Գէոր-  
գովի յառաջագիմութեան՝ միջնորդ առ Առաջնորդն արկի զմօ-  
բաքիտ իմոյ զայրն զՄինաս Մարտիրոսովն, առանց կամաց Այ-

բիացեալ Մօր իմոյ, և եղէ սպասաւոր Նորին Սրբազնութեան  
ի 1782 ամի Տեառն, զորմէ ունեմ արդ ճանել:

Թէ ո՞ւսի եւ ո՞վ իցէ այս Առաջնորդ:

Ի Սերաստիայ քաղաքէ Յօճաննէս Չէրքեղեան առձայնեալ՝  
Հայր բարեգութ, սրբանունդ, մաքրակրօն, ուսումնասէր, անդույ  
դասատու, հոգեբուղիս, անձարան ծնեալ ի Սերաստիայ, ինքնին  
հեռացեալ ի ծնողաց, սնեալ ի վանս սրբոյ Կարապետի ի Կեսա-  
րիայ՝ յԱռաջնորդութեան Դաւիթ ճգնակրօն Արքեպիսկոպոսի,  
ուր վարուք և ուսմամբ յառաջադէմ լեալ բարդաւոր դիպուածով  
իմիք:

Քանզի ցայնժամ ոչ ունէր տարածեալ քերթողութեան ար-  
հեստ և այլ գիտութիւնք յԱսիական երկիր, և դեռ նորարողը  
ժողկիր ի Կոստանդնուպօլիս յետ Գատուկի վերաանեալ Պաղ-  
տատար դպրի և իբր Առաջին վարժապետի, երկրորդապէս փայ-  
լեալ Արսէն վարժապետն ի զէնծիր խանն ի մէջ Պօլսոյ:

Անդ Յարութիւն պատանի ոմն Թէքիրտաղցի քսանամեայ իս-  
հաւանառ, որ թակաղաղ խանիւ կամ թապալայով կերակուր ի խաճա-  
նաց աշծի տիւքանէն չըջեցուցմամբ վաճառէր և տանէր ի զէնծիր ի  
խանն, տայր յիշեալ Արսէն վարժապետի աշակերտացն, տեսանելով  
զքն թերցումն մանկանց, սիրահարեալ այս Յարութիւն իսհաւանառ,  
թողեալ գայն, աշակերտի Արսէն վարժապետին, յորմէ ուսանի ըստ  
տուչութեան Հոգւոյն Սրբոյ, զԲերականութիւն, զճարտասանու-  
թիւն և զՏրամաբանութիւն: Երիտասարդական հասակաւ գայ ի Կե-  
սարիայ ի վանս սրբոյ Կարապետի, յորում յիշեալ Յօճաննէս  
Չէրքեղեանն վարդապետական պաշտօնիւ լուսարար էր վանուցն:

Դաւիթ Արքեպիսկոպոս Առաջնորդն զԹէքիրտաղցի Յարու-  
թիւն տայ ի սպասաւորութիւն այս Յօճաննէս վարդապետ Լու-  
սարարի: Տեսեալ սորա զչնորհազարգութիւն Յարութեան, ինքն  
վարդապետն ի թանկագին սպասաւորէն դաս առմամբ ընթեանաւ  
զարհեստն նշանակեալ:

Զխոնարհութիւն վարդապետիս և զբարեմտութիւն Աշակերտ  
վարժչին, աստ է տեսանել, լուսարար վարդապետն ի դասառու-  
թեան ժամուն, բարձմամբ վեղարին, ծնկաչօք դաս տանու ի սպա-  
սաւորէն և անդրադարձ ի լուացուիլ վարդապետին, վարժապետ  
աշակերտն բացազուի Ղուր ամէ ի ձեռս վարդապետ դաստիա-  
րակեցելոյ յինքննէ: Սոյն այս Յարութիւն վարժիչս է, որ եղև  
հոշակաւոր Արքեպիսկոպոս, որ կոչիւր Թէքիրտաղցի Յարութիւն  
վարդապետ և գերեզման սորա է ի Զմիւռնիա քաղաքի, որոյ յի-  
շատակն օրհնութեամբ եղիցի:

Այս ունակ հողով զարգացեալ Չէրքէղեան Սերասաացի Յօհաննէս վարդապետն ի սուրբ Կարապետու վանս ի Կեսարիայ շարունակ տասն և վեց ամ, ուստի գնացեալ ի Կոստանդնուպօլիս յաւուրս առաջնոյ Գրիգոր Պատրիարքի, փոխանորդի Յակոբ Ա՛ծարան Պատրիարքին, Յօրմէ առաքի առաջնորդութեամբ ի ի վիճակ ամասիոյ և Մարզվանու: Եւ ի վերայ նոյն վիճակին՝ ընկերակցութեամբ Մատթէոս վարդապետին Կեսարիայու, ի Սիմէօն Հայրապետէ ձեռնադրին եպիսկոպոսք անցնիւրոց վիճակաց: Եւ երկուսասան ամ կառավարեալ հովուէ բարեպէս զվիճակն Ամասիոյ:

Իսկ ի փոփոխիլ Պատրիարքոյն Համատանցի Յովհաննէսի և ի վերադառնալ կրկին Ջաքարիայ Կաղզրվանցւոյ ի Պատրիարքութիւն իւր ի Պօլիս, Համատանցին խնդրէ զվիճակ Ամասիոյ, ուր ոչ գոն Աւսիթոսեան Կատինացեալք, ընդ որս յարուցեալ էր խոսվութիւն մեծ ի Պօլիս, յայտ վիճակ անդորրութեամբ անցուցանելոյ վասն զկեանս: Այսպիսի դիպուածովք վիճակաւոր Արքեպիսկոպոսն արձակի ի վիճակէն և Համատանցին տիրէ նոյն վիճակին:

### Գայն Չէրքէղեան Սերասացի Յօհաննէս Արեւալիսկոպոսին ի Կիւմիւշիանայ եւ աւակերտիլն իմ նմա:

Ի 1780 թուականին նշանակեալ Յօհաննէս Արքեպիսկոպոսն դայ ի Կիւմիւշիանայ և զկնի երկուց ամաց ըստ յառաջ գրեցելոյս միջնորդ արկանելով իմ, աշակերտիմ նորին Սուրբ Հայրութեան անարժան որդէորութեամբ ի տասն և ի չորս ամեայ կենաց իմոց 1782 ամի Տեասն, զկնի չորից ամաց ձեռնադրեալ զմեզ անդ սարկաւաղ և յօթներորդ ամի Առաջնորդութեան գէպ եղեալ գնացաք ի միասին ի Պօլիս ի 1788 թուականին Տեասն, սիրով ընկալեալ եղև ի Ջաքարիայ պատրիարգէ և յարգամեծար Ամիրայից Առաքի ի Օրթագիւղն Պօլսոյ քարոզչական պաշտօնիւ մնալ յարգանօք (թէև Առաջագէմ աշակերտք Ջաքարիայ պատրիարգի գծամենէին առ այն թերևս յետ վախճանի պատրիարգին, Ամիրայք զԱս կացուցին Պատրիարգ):

Անդ ի յՕրթագիւղ տասն և ութն Մանկունք Ամիրայից և այլոց յանձնեցան նուաստութեան իմոյ, ըստ կարեաց ընթերցումն ուսուցանել նոցա, յընթացս ինն ամաց:

## Նախածանօթութիւն Դանիէլ Արքեպիսկոպոսի եւ Ներսէս վարդապետի:

Յաւուրսն յայնստիկ Զմիւռնայի առաջնորդ եւ նուիրակ Դանիէլ Արքեպիսկոպոսն Աշտարակեցի Ներսէս վարդապետ Արեղայիւ իւրով եկին ի Պօլիս ի 1798 թուին ընկեցեալ ի վիճակէ, խարդախութեամբ Աշակերտացն Զաքարիայ սպարիարզի եւ ի տեղի Նորին առաքեցաւ Կեսարացի Մարտիրոս Արքեպիսկոպոսն, որ Ազգականն էր Պօլսոյ վէճիլ Պետրոս Արքեպիսկոպոսին, ընդ Դանիէլ արքեպիսկոպոսին եղբայրական սէր կալաւ Հոգևոր Հայրն իմ, եւ ընդ Ներսէս վարդապետի նուաստութիւն իմ: Զորոց զկնի ունին լինել բանք մեր:

## Վախճան Համատանցւոյն եւ գնայն մեր Անդ:

Հորովումն անուոյ կենաց Համատանցի Յօհաննէս Արքեպիսկոպոսին ի Մարսիան հասեալ. թէև երկրացիք ունելով առ ինքեանս զձեռնասունս Համատանցւոյն զնփրեմ եւ զԳէորդ վարդապետն, բայց սպարիարզն եւ Ամիրայք զառաջին զպսակաւոր զՀայր Մեր զՅօհաննէս Արքեպիսկոպոսն ըստ կանոնական զօրութեանց տնօրինեալ առաքեցին վերստին Առաջնորդութեամբ յօրինաւոր վիճակ իւր Յամասիայ:

Ժամանեալ մեր անդ, ոչ յետ բազում աւուրց՝ յաւուր տօնի Սրբոյն Յակոբայ Մծրնոյ Հայրապետի ի մէջ Սուրբ Յակոբ եկեղեցւոյն Ամասիոյ ի ներկայութեան Բարսեղ Արքեպիսկոպոս նուիրակի Սուրբ Էջմիածնի եւ խարտավիրակութեամբ Նորին փոքրաւոր Հռէթէոս վարդապետի ձեռնադրեաց Հոգևոր Հայրն իմ զնուաստութիւն իմ Արեղայ եւ փոխարկեալ զՍտեփաննոս անուոնն իմ, վերակոչեաց Մանուէլ, ըստ կանուխ խնդրանաց ժամանակին երևելի բազում բարեպաշտութեամբ հռչակեալ եւ տասն վարժարանաց եւ հիւանդանոցից ի Պօլիս շինող Շնորհ Մկրտիչ Ամիրայի, յանուանակցութիւն Որդւոյ իւրոյ Մանուէլի ի 1796 ամի Տեառն եւ ի Հայոց ՌՄՍԵ: Ապա ի Մարզուան քաղաքի, իսկ խարտավիրակութեամբ Բարսեղ Արքեպիսկոպոսի՝ շնորհեալ ինձ ի մէջ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ զվարդապետական գաւազան, որ չեմ տակաւին զղպրութեան աւարտեալ զպաշտօն:

Այս ամենայն ցարդ վերոյգրեցելովք անձնական դիպուածովք իմովք, բացածանուցան եւ ծանուցանին, թէ ըստ կարեաց ընթերցման զաստիարակութիւն իմ եւ զպաշտօն մինչ քսան եւ ութ ամեայ հասակիս, եւ ցարդ զորս ունիմ, են մի միայն ի Նորին Սրբազնութենէ Սերաստացի Զէրբէզեան Յօհաննէս Արքեպիսկո-

պոսին Ամառիոյ և Մարգուանայ տքնութեամբ և անդուլ աշխատանօք դասատութեամբն պարգևեալ ինձ ի վերին ներդործութենէն և Նորին Սրբազնութեան յետ լրացուցանելոյ զեռանգագին տենչանս հոգւոյն, ձեռնադրելով զանարժանութիւն իմ, հետևի վերակոչողին իւր նախասահմանութեան ի նոյն թիւ դեկտ. 12 ի յԱմասիայ քաղաքի, և կայ Շիրիմ նորին յարեմտեան դրան Սափայիտ Սուրբ Աստուածածնի, որ զկնի նորոգութեան նոյն եկեղեցւոյ մնայ և սուրբ դամբարանն այն ի մէջ տաճարին և է ուխտատեղի ծանօթ բարեպաշտից:

Այլ թէ զինչ ինչ չարիք շարունակեցան ի վերայ արժանակոծ անձին իմոյ զան մասնաւորապէս յետ զյետէ ի յայտ սոյն գրականութեամբ, որք մնան անմահք, և կարեն լինիլ խրատք իմոյս նմանեաց:

### Զկնի քաղման սորա, եւ իմ ի Կոստանդնուպօլիս գնալոյս:

Մինչև ցայս վայր էին իմ ըստ խարշիկ աշխարհի երջանկապէս կենցաղավարիլն, յետ այսորիկ ալին զալին կուտակեալ ձախողակ դիպուածովք տարուրերն զնաւակ ողորմելի կենաց իմոց: Քանզի յետ բարձման պարձանաց գլխոյ իմոյ բարեխնամ Հոգևոր Ծնօղիս, երկրորդի աւուր հանդիսաւոր թաղմանն, եկին հասին Ատենադպիր նախ պատաւորին, և պահակք շավուշ և հասասք քաղաքապետ Հասան պէկին, կնքեալ զարկեղ և զպահանոց տօլապան, տարեալ և զիս եղին ի բանտ առանց ինչ հարցաքննութեանց՝ ցերեք օր: Ապա միջնորդութեամբ մերազն պատուելեաց՝ հանեալ զմեզ յատեան դատաւորի և պէկին, որոց կամք էր անուլ յինէն զինչս Տեառն իմոյ, եւ բանք իմ եղեն առ նոսա, արդամենայն ինչ հանգուցելոյն կան ընդ ձեռամբ և կնքովք ձերովք, եւ զայս և եթ գիտեմ զօրութեամբ առ մեզ եղեալ Հրովարտակաց՝ թէ այն կայք պատկանին Պատրիարքին Պօլսոյ, եթէ յարգութեան ձերում պատկանելիք գիտէք, կարէք և առանց ինձ հարցանելոյ տիրել, ոչ գիտեմ վասն ոյր բանտարկեալ կամ ես:

Մերազնեայք մասնաւոր տուգանօք առեալ զմեզ անտի, բարձին և զկնիքան, ժողովեալ իմ զամենայն յերկրորդի ամի ձեռնադրութեանս, գնացի ի Պօլիս առ Զաքարիայ Պատրիարզն, ինամօք ընկալայ ի նմանէ առանց պահանջելոյ յիշեալ ընչից, և դասեցայ ընդ ձեռնասունս նորա ի հիացումն բաղմաց, զի պատրիարզն Զաքարիայ մինչև ցայնժամ ոչ էր իւր ցուցեալ զայլ եպիսկոպոսի կամ վարդապետի զսպասաւորան ինքեան:

Յաւուրան յայնսսիկ և նախայիշեալ Դանիէլ արքեպիսկոպոսն

ընդ Աշտարակեցի Ներսէս վարդապետին, որ հրաժարմամբ ի Չմիւռնիայէ, նուիրակութեամբ գնացեալ ի Ռուսմէլի, և անտի վերադարձեալ ի Պօլիս, և ընդ տարաբաղդութեան իմոյ վախճան հասեալ և Պատրիարքին Չաքարիայ, յետ բազում տարածայնութեան ի ձեռնասուռնից իւրոց, համակմամբ Աղղին ընտրեցաւ Գանիէլ արքեպիսկոպոսն Պատրիարք Պօլսոյ, զորմէ լինեն այժմ մեր քանք և պատմութիւնք, ուստի ազբերանան և տարաբաղդութիւնք մեր:

### Ի պատրիարգութեան Գանիէլ Արքեպիսկոպոսի:

Ի Տէրունեան Թուականի 1799 և ի 12 մարտի ի պատրիարգութեան ընտրեալ Գանիէլ Արքեպիսկոպոսին՝ յԱրքունական դրանէ զստորականն զգենու զխիլայ կամ զղաֆթան, բայց ի ներքս ի պատրիարգարանին լինելով ձեռնասուռնք Չաքարիայ Պատրիարքի Յօհաննէս և Պետրոս եպիսկոպոսք, Կարապետ և Աստուածատուր վարդապետք, Մեսրոպ և Սահակ սարկաւազունք և խոհարարք նոցին, որ ընդդէմ ակնկալութեանց այս նշանակեալ Հոգևորականացս էր ընտրութիւն նորապսակ Պատրիարքին, յայտէ ըստ գրեցելոյն լինել անակից թշնամոյն, է պատու անխոհականութեան:

Եւ նորապսակ Պատրիարքն՝ բաց ի Աշտարակեցի Ներսէս վարդապետէ զայլ որ ոչ ունելով առ ինքն անձնական հաւատարիմ, և նա ունէր գնալ յԱթոռն Եջմիածին, ապա զնուիրակութենէ հաշիւն Ռուսմէլոյն ի տեղի Գանիէլ Պատրիարքի:

Ըստ կանխագրութեանս աստ նախածանօթ լինելով մեր ընդ նոսա հարկեցին մեզ քնալ ի տեղի Ներսէս վարդապետին անձնական գործակատար ի պատրիարգարանի, նաև յանձնեցաւ մեզ բոլոր ի պատրիարգութենէ Չաքարիայի ժողովեալ ողջունագրութիւնք, խնդիրք, հրամանք, պայմանագիրք, և հրովարտակք, քանի արկեղքք խառն և անկարգապէս լցեալք, ընթեռնուլ, որոշել, և զհարկաւորսն ըստ կանոնի պահպանել:

Հետաքննութիւնք այսպիսի գործոց և աշարուրջ պահպանութիւնք ել և մտից Պատրիարգարանին և Պատրիարքին, զվաղեմի խնամակալ եպիսկոպոս և վարդապետսն Չաքարիայ պատրիարքի, փոխարկեցին առ մեզ ասեցօղս, և թշնամիս Ռերթէ զկնի վէքիլ Պետրոս արքեպիսկոպոսի որ ի Նարեկայ վանուց միարան պուշ և իբր զաշացու Կարապետ վարդապետ մի կացուցաւ վէքիլ, որ զսողմոսն անգիր գիտէր, թէ լինէր երիտասարդ գուցէ և զկառավարութիւն վեքիլարանին ուսանէր, վասն որոյ և զսորա պաշտօն ըստ մեծի մասին ծանրաբեռնեալ էր առ իս:

Ընդ աւուրսն ընդ այնտօսիկ ել ընդ յառաջ և այլ ևս Մեծա-

զոյն զլսողմանց անըմբերելի առարկայ, ոչ միայն ինձ, որ ի սպասարութեան էաք պաշտօն, այլ և ողջոյն Մերազնէից Հոգևորականացն ատեմ, և Մարմնաւորականաց և ևս ձանձրութիւնք իշխանութեանց և տէրութեանց:

### Վախճան Առկաս կաթողիկոսի և բնօրութիւն փոխանորդի:

Զսկիզբն, զՄէջ և զվախճան Առկաս Հայրապետի և յաջորդացն միայն դառաջին հատորն ի շափ մատենի միոյ և Ապա զկշիռ գրութեանց անուանեալն զորս արարեալ իմ, բանասէրք յայնցանէ ունին քաղեալ զհարկաւորսն իւրեանց. Աստ միայն զանրազգ տաժանմանց մեր են բանք:

Ի 1799 և ի դեկտ. 27 վախճանելով Առկաս կաթողիկոսին, Միարանութիւն էջմիածնի թէև ընտրեալ էին զՍոյն Դանիէլ Պատրիարքն ի կաթողիկոսութիւն, բայց նշանակեալք և զայլս, զՆիքիմ և զՅովսէփ Արքեպիսկոպոսն, զՄահաարազրութիւնսն Դաւիթ եպիսկոպոսի յանձնեալ՝ առաքեն ի Պօլիս, ուր Դաւիթ և Դալուստ եպիսկոպոսք յինքեանս շորկելոյ յուսով զկաթողիկոսանն զայն պատիւ ընդարձակէր տարածայնութիւն ի մէջ Ազգին:

Պատրիարքն Դանիէլ՝ զայլ որ առձեռն ոչ ունելով պատրաստ դործունեայ հաւատարիմ առ իշխան Ամիրայսն Բանատարս առաքել, զնոյն վտանգարեր պաշտօն ևս մեզ հրամայեալ, որով անդադար, բացի ցերեկեայս ի պանդոկս և ի շուկայս առ երեկիսն Ազգին երթեկեկելոյս, ի գիշերայն ևս թամհարօք և լապտերօք զնսեաք և զայտք:

Յայտ է խոհական ընթերթանաց, որ այսունակ, Ազգային պատահմանց՝ բազմոստեան լինին ձայնք և կամեցողութիւնք, ոմանց զայս, և այլոց զայն յառաջ ածել կամելով, յորոց, այսինքն իշխանաց՝ թէ երկուքն լինէին ի մի կողմն, իցէ և երեքն յայլ միաս ունէին զինքեանս:

Արդ թէ որքան անկարեւորութիւնք կան ի մէջ սոյնանման պաշտօնատարութեանց, Սուրբ Աւետարանաւն է ուսանել ըստ երկուց տէրանց ծառայողաց:

### Գալուս Մօրն իմոյ ի Պօլիս:

Աստ ըստ կանխագրութեանս ի 1787 թուականէ բաժանելոյս յողորմելի այրի այլ և անգաւակ Պէկղատ Մօրէ իմմէ յընթացս տասն երեք ամաց և անակնկալութեանց միւսանգամ յերկիր ծննդեան զնալոյս ի կենդանութենէ ծնօղիս, Հրամանաւ Դանիէլ

Պատրիարքի առեալ դայր հաւատարիմ զի բերցէ զՄայրն իմ ի Պօլիս:

Անբաղդ այրի պառաւն պատահի ևս դառն անբաղդութեան, զի մտանելն նորա ի Պօլիս ի 1800 ամի Տեառն և յ7-ն ապրիլի, թէև աւետարէրք գային առիս, բայց նշանակեալ զբաղմունք Պատրիարքարանին ոչ ներէր ինձ գնալ տեսանել և զկարօտ նորին լցուցմամբ զօրհնութիւն մայրութեան ստանալ: Յանձն առնեմ բարեկամի իմոյ Մէստճի Գէորգին՝ տանիլ ի տուն իւր յՕրթագիւղն Պօլսոյ և հազիւ յետ տասն աւուր գալստեան նորա, ի 17 յապրիլի գնալ կարևոր եղև ինձ ի միում աւուր տեսութիւն առնուլ: Եւ ըստ կատարեալ անբաղդութեան նորին և իմ ի նոյն թիւ 13 մայիսի գնացաք ի Պօհճայատայ ընդ Դանիէլ Պատրիարգին, այս եղև մահարեք վիշտ սղորմելի ծնօղին իմոյ:

### Գնալն Դանիէլ Պատրիարգին ի Պօհճայատայ:

Էջմիածնի միաբանից խարդախ գրութիւնք, Յովսէփ և Յօհաննէս Արքեպիսկոպոսաց փառամուրթիւնք, Դաւիթ և Դալուստ եպիսկոպոսաց խոռվայուղութիւնք, Ամիրայից ի մէջ երկուց ճանապարհաց շուարիլն և Թամարով զեսպանի օժանդակութիւն վասն Արղութեան Յովսէփ Արքեպիսկոպոսի ընդդէմ յիրաւացի պատճառաց, ըստ պատահման Սրբազան Առաքելոյն Պօղոսի, ի Տենեգոս կղզին հսկի Ստամպօլ կոչեցեալ Պօհայ ադայն աքսորեցուցին զԴանիէլ Պատրիարգն:

Բանդի ըստ արդար իրաւանց, թէ ոչ յաջողէր նմա կաթողիկոսութիւն, պարտէր մնալ ի Պատրիարգութեան, սակայն վերոյգրեալ հոգմունք ալէկոծութեանց՝ արկին գնա ի մէջ յերկուց աթոռոցն ի գեաին ըստ բանի Թամարով զեսպանին Ռուսաց:

Զխոռվարկու Դալուստ նուիրակն ի Իլիմիայ կղզին, և զԴաւիթ Մահլերարերն յետս յէջմիածին առաքմամբ, զՅօհաննէս եպիսկոպոս զաշակերտ Զաքարիայի կացուցին Պատրիարգ Պօլսոյ:

Եւ մինչ որոշեցաւ Դանիէլ Սրբազանին գնալ յիշեալ կղզին Տենեգոս, ոչ ոք էր ընդ նմա ի միաբանիցն Էջմիածնի՝ բացի Պաղղասար սարկաւազէ միռջէ, վասն որոյ թողեալ իմ զամենայն Հայրենի վարդապետական հազուադիւտ սուրբ Մատեանսն և զկայս ի ձեռնադրող Արքեպիսկոպոս Յօհաննէսէ, ինձ մնացեալսն, և զՄայրն իմ, յօտար ձեռս, գնացաք տարազիւր ընդ Սրբազնութեան Դանիէլ Պատրիարգին շարունակ հինգ ամիս կալով անդ ի մէջ այլակրօնից:

Վերադառնալի մեր յախտումաց:

Հողունդութեամբ Ամիրայիցն Պօլսոյ՝ թէպէտ արձակումն եղև Սրբազանին ի հոկտեմբեր 1, ելանել ի կղզոյն Տենեզոսի և ազատ կամօք գնալ ի Պանարմայ, բայց ի նաւելն մեր ընդ թրակիաւ կամ եղև Սրբազանին գնալ ի Հաեդեստոն, այն է թէքիր տաղը. յերկրապագութիւն վերնագիր բեկոին Քրիստոսի, որ կոչի սուրբ Թագաւոր, և յետ կատարման ուխտին, մինչ անցանէաք ընդ մէջ Հելեսպոնտոսի և Պրոպոնդոսի ի ծովն Մամառա, յարեաւ Եւլակիկոն ուռուցիկ հողին ծովուց, անյոյս արարեալ զմեզ ի կենաց, դարձուցեալ զղեակ նաւուն փոխանակ Պանարմայի, մաղապուր հասաք ի Հէրէկ, ուր կայեալք յերեք օր սակս փոթորկաց և ձիւնախտոն անձրեաց: Ապա ոմանք երիվարօք և այլք հեռակ (զի յարձակման աւուրան մեր, խորովածաղոզ միարանք ոմանք, եկեալ յարեալ էին առ մեզ). ի 15 հոկտ. ժամանեցաք ի նպատակն մեր ի Պանարմայ:

Ճանապարհորդութիւն Դանիէլ Սրբազանին ի Պայագիս:

Ի Չորրորդ աւուր նոյնիւրի Պազդասար սարկաւազն առաքեցաւ ի Պօլիս, ի Յօհաննէս Պատրիարդէ զաւելացեալ ինչոն Դանիէլ Սրբազանին բերել և ի վերադառնալ նորին, զէպ ուղիղ զնացաք Յեւզոկիայ՝ այն է Թօխաթ, զկայ տեալ անդ երեք ամիս, ուրանօր եհաս համբաւ զճանապարհայն ի Տիխիս վախճան Արդութեանց Յովսէփ Արքեպիսկոպոսի:

Եւ հետեւեալ ամի ի 1801 յունվարի 22 Աշտարակեցի ներսէս վարդապետն, որ էր յէջմիածին, ընդ պառաւի աղայ Յօհաննէս վարդապետի եկին Մահդէրազրութեամբ միարանից, երկրաւորաց, և յատուկ գրով Դաւիթ եպիսկոպոսի յորում ասէ Դաւիթն, Աստուած է, որ կոչէ զքեզ, և սվ է որ կամաց նորա կացցէ հակառակ, անդ ի Թօխաթ էր և Յամսեցի Գրիգոր Արքեպիսկոպոս նուիրակն էջմիածնի: Այս հրաւիրակաց և յորդորանօք Թօխաթցւոց ճանապարհորդեալ Սրբազան Դանիէլ գնալ խորովն զճանապարհաւ Մասէնու և Մուշու նուաստութիւն իմ յառաջարկեալ յայնժամ զնալ ինքեանց կարևոր ընթացիւք, ըստ որում վեհանձինք ծանրագնաց լինին, և կարծիք կայր ի խարդախութենէ միարանից, և իսկ ի նոյն Դաւիթ. զներսէս վարդապետն սուրհանդակաւ առաքեալ յԱթոն ծանուցանել զգնալ Վեհին, և զիս ի Պօլիս, առ ի հողալ և առնուլ զհրովարտակ Տէրութեան, առ այս խորհուրդ՝ արդել եղև յամսեցի Գրիգոր եպիսկոպոսն:

Անմիարան խորհրդով և ընթացիւք, երբ հասաք ի Բաղրեան

գաւառ վեց ժամաւ բացեալ յիւշքիլիսէյէ, ի Շօրվէրէն գիւղ, լսելի եղև թէ յապրիլի 28 Դաւիթ եպիսկոպոսն շնորհիւ Մէհմէտ խանին Երևանու, բանակալեալ զԱթոսն օժեցեալ է կաթուղիկոս, յորմէ և ինձ յառաջ եկին անդադար տառապանօք վշտակրութիւնք:

Գնալն իմ ի Պօլիս, եւ գալ Ներսէս վարդապետիս  
անդ եւ դարձուածի:

Գնացեալ Դանիէլ Մրրադանն ՚ի Պայազիթ, խորհրդով տեղւոյն Բղեշիսի, հարկ եղև զմինն ի մէնջ առաքել ի Կոստանդնուպօլիս: Որք ոչ կամէին ի Թօխաթու առաքել՝ արդիս անօգտակար ժամանակաւ, և հետաւօր ճանապարհաւ ինքեանք հարկադրեն մեզ գնալ, որք ետուն Բղեշիսի սուրհանդակ թաթարին շորս հարիւր խառն ճանապարհի ծախս և միայն յիտուն խառն ինձ ձեռաց խարճի, և իմ թողեալ զամենայն զգնելիս և առձեռն եղեալ Մատեանան, երկու պատմութեանաւ վաթսուն օրեալ ճանապարհն, ընդ սուրհանդակին գնացաք յերկոտասան օրն և յունիսի 2 ժամանեցաք ի Պօլիս: Որ Դաւիթ բանակալն ամօրեալ ժամանակաւ յառաջ զպայազիտեցի Կարապետ եպիսկոպոսն ի կողմանէ իւր առաքեալ էր, բայց Կարապետն յուսալի լինելով Յօհաննէս Պատրիարքէ Պօլսոյ հանդարտաբայլ ընթացիւք 15 օր զկնի քան զմեզ եմուտ ի Պօլիս: Սակայն Պատրիարքն Յօհաննէս նախահոգացութեամբ յԱրքունի դրանէն հանեալ և պատրաստեալ էր զՊէրաթ Թէրմանն յանուն Դաւիթի, որ ի գալ Կարապետ եպիսկոպոսին յանձնեաց նմա և նա յետ քանի աւուրց անաշխատ առեալ զբաղձալի հրամանագիրսն, առաքեաց սուրհանդակաւ առ Դաւիթն յիջմիածին, ինքն ըստ յառաջնոյն դիմեաց գնալ զկնի, որոյ չև էր հասեալ ի Կարին, թէ որպէս դարձուածք եղեն ի Պօլիս:

Իսկ մեր թէև առ օրին ներկայացաք նոյն պատրիարքին, տալով նմա գնամակ Դանիէլ Մրրադանին և պատմեալ զդարանակալ բնութենէ Դաւիթին, սակայն նորա ի չքմեղս եղեալ այլ և այլս պատասխանեաց մեզ, զգացեալ մեր զկիրս հոգւոյ նորին, ծանուցաք ազգային Ամիրայից և զրեցաք ի Սանկդ Պետերբուրգ առ վիճակաւոր Եփրեմ Արքեպիսկոպոսն, և առ վեհազն Լազրեան Աղայ Յօհաննէս, Աղայ Մինաս, և Աղայ Յովակիմ երեք եղբայրսն մերազնեայս:

Մինչ նուաստութիւն մեր խելամտութեամբ շարժեալ էաք զխոհականն Ազգի մերոյ արդարութեան լինել քննիչ և դատախազ: Ընկերակիցն իմ Ներսէս վարդապետ ընդ միաբանից իւրեանց, և զիս խարդախ ի բանս խոկալով՝ եկն հճաս ի Պօլիս յուլիսի 19 և հաւես զամենայն ինչ պատրաստեալ ի հաճոյս իւրեանց:

### Ներգործութիւնք ի Ռուսաստանու:

Փոխանակ քանից, ևս հաւատարիմ առնէ գործն, քանզի ի գրութեանց իմոց խելամուտ եղեալք Եփրեմ Արքեպիսկոպոսն և Վեհազն Լազրեանք, աղերսական գրով հասուցանեն զքանն ի սուրբ լսելս նորաստեղծ Աղէքսանդր Պապլովիչ Կայսերն և մեզ գրեն սրտապնդութեան միամտութիւն, այս գիր՝ յուլիսի 17, յառաջ քան զգալ ներսէս վարդապետին ի Պօլիս, ժամանէ առիս. և իմ ծանուցմամբ Ամիրայից. առաւել գոտէպնդեալք, յանկարկորաց՝ զկարևորն ներգործեցին: Զի զՅօհաննէսն հանկալ ի Պատրիարքութենէ հսկա. 19 աքսորեցին ի Թօխատ և զտեղւոյն նախարակ խամսեցի Գրիգոր Արքեպիսկոպոսն բերեալ ի Պօլիս Պատրիարք դեկտ. 19: Այլ և փոխարկեալ զՊէրաթ Ծէրմանն Դաւթի, յառաջ քան զգալ նոր պատրիարգին Գրիգորի, առին յանուն Արքազանին Դանիէլի նոր Պէրաթ Ծէրմանու Զորս՝ յիշեալ ընկերակիցն իմ ներսէս վարդապետն միամտեալ ի հաւատարմութենէ իմմէ, թողեալ զմեզ առ Գրիգոր Պատրիարգն, առեալ գնաց ի Պօլսոյ ի 1802 յունվ՝ 16, որ փոխանակ անգործութեանց, ևս քան զես յաւելան անձկութիւնք և տառապանք իմ:

### Կառավարութիւնք Քրիզոս Պատրիարգին

Ըստ սովորական կրթութեանց Էջմիածնի Մխարանիցն, խամսեցի Գրիգոր Արքեպիսկոպոսս այս՝ էր ընտրելագոյնն ի նոցանէ և սրբաանունդ ճգնակիր, աղօթասէր, սաղմոսասաց: Բայց ըստ քաղաքական կառավարութեան անողորբի ընդոստ բնութեամբ զարգացեալ, ոչ զաջ նկատէր և ոչ զահեակ, մանաւանդ ի Եփրեմ Արքեպիսկոպոսէ խրոխամիտ գրութիւնս ստանալով, կարծէր զինքն Կայսր Ռուսաց, անվանելի յումեքէ:

Վասն որոյ զկուսակից հողերական և զաշխարհականն Դաւթի յետին անարգ անպատուութեամբ ունէր, և յատենի քարոզութեան Թաւթ կոչէր՝ զբռնակալոզն: Այլ և զարքունական Սէհէթճի պաշր Բարթուղիմէոսն, Դաւթեան և Յօհաննիսեան անուամբ՝ յատենի սուրբ Աստուածածնի Պատրիարգական յեկեղեցւոյ ըստ անսպայ սովորութեան իւրեանց, բանադրանօք կապեաց, ոչ ոք խօսիլ ընդ նմա և ոչ առևտուրս առնել:

Անլսող գոլով ըստ ամենայնի բարեկամաց, մինչ զի վէզիրի սառաֆ Փիլիպպոս Ամիրայն Ալփիարեան, ընդ իւր առեալ զյիշեալ Սէհէթճի Բարթուղիմէոսն, և գնացեալ առ Պատրիարգն զի հաշտեցուցէ ընդ նմա, բանախօս եղեալ ընդ պատրիարգին ժամ

մի և ոչ կարաց զիջուցանել զեսութիւն նորին, ամօթապարտ դարձան յետս: Եւ յետ ինն աւուր զանպարտելի Գրիգոր պատրիարզն իջուցեալ յեսական Աթոռոյն, առաքեցին էջմիածին առ Դաւիթն և ի պատճառս նորին, փոխեցին ևս զՊէրաթ Ֆէրմանն Դանիէլ Սրբազանին, յանուն Դաւթի և զՅօհաննէսն ևս բերին ի Թօխաթու ի պատրիարզութիւն Պօլտոյ:

Ի պատճառս Գրիգոր Պատրիարզի, կամէին և գնուաստութիւն իմ ընդ նմա արսորել: Եթէ գտանէին առ օրին, բայց մեք անձնապահ եղաք յայնժամ. խոհականք բարեպէս կարեն կշռել զայս ամենայն, և մանաւանդ որք ընթեռնուն զլիակատար պատմութիւն զարարելոցն մեր ի վախճանէ Ղուկաս կաթուղիկոսին, և զայլ կշիռ գրութեանց կոչեցեալն, մեք զանձնական դիպուածսն մեր ճառեմք աստանօր:

### Բանք Աէհէթնի Բարդուղիսէոսիւ առ իս:

Ըստ կանխագրութեանս աստ, ի 1787 ամի Տեառն, երբ ընդ հանդուցեալ իմ Հոգևոր ծնողիս էաք ի Պօլիս և յՕրթագիւղն, Ամառանոց տուն այս Աէհէթնի Բարթուղիսէոսիս էր ի նոյն Օրթագիւղն: Անձնադիր բարեկամ էր սա Հոգևոր ծնողիս, և զլխովին խնամածու ինձ:

Ի ծագիլ դարձուածոց Դաւթեանց և Դանիէլեանց, սա եղև ի կողմն Յօհաննէս պատրիարզի, վասն որոյ մեք խորշէաք ի ամանէ: Յաւուր միում պատահեալ սորա մեզ առ ճանապարհայն, համեստ մեղադրանօք առաջարկեալ ինձ գնալ միանգամ ի տուն իւր, պարտաւորեալ ի բարեկամական խնամոցն, գնացեալ առ նա և յերեկօթս արարեալ, յետ յիրաւացի ըստգտանաց, որ իմ թողեալ է զՀայրենի բարեկամսն, հարցական եղանակաւ ասաց, զի՞նչ բարելաութիւնս ունիս ստացեալ ի Դանիէլ պատրիարդէ, կամ զի՞նչ կարէ բարեբարել, որ մեք դիւրաւ ոչ կարեմք ընձեռել քեզ: Եկ ընդիս վաղիւն երթիցուք առ Յօհաննէս պատրիարզն, միայն զաջն համբուրեալ ասան, որդի քո եմ ևս:

Զոր ինչ վիճակ կամիս, և կամ զՀայրենին քո զՅամասիա և զՄարդուան թէ՛մօքն, իսկ և իսկ դարձուցանեմք առ քեզ առանց ծախուց: Եւ ևս իսկապոսութիւն հետևորդ է վիճակին, ով և իցէ կաթուղիկոս, հարկադրի ձեռնադրել զքեզ: Ուրեմն աւելորդ է ժամավաճառ կենամաշութիւն քո վասն աթոռայնոց, յորոց ոչ ոք օտար աշխարհիկք շահեցեալ են ցարդ բացի յերկրացւոց և ի մերձաւորաց իւրեանց:

Առ որ պատասխանեալ իմ, գիտեմ հաւաստեալ, որ վասն վաղեմի սիրոյդ առ Հայրն իմ, և խնամոցդ առ իս, բարեհաճիս,

կամիս և կարևոս զխոստացեալսդ ատնել ինձ զբարիս: Բայց բնա-  
ւորեալ ինձ, որոց ուխտեմ ծառայել, կամ նա պարտ է մեռանիլ,  
յորմէ ազատ լիցի կեանքըն իմ, կամ ես, զի մի խարդախ գտա-  
նիցիմ խոստման իմոյ: Տասն և չորս ամ ծառայեցի Հողևոր ծնողի  
իմոյ Յօհաննու, նա Աստուածահրաւէր կոչմամբն պարտագեծ  
կացոյց զիս: Այժմ ուխտեալ եմ ծառայել Դանիէլ Արքազանին,  
տակաւին երկոքեանքս ևս կամք կենդանի, զխարդ ի բանս իմ  
խարդախ գտայց յաշխարհի:

Յորմէ ընկալայ հակիրճ լուծումն վախճանական խոհակա-  
նութեան, ըստ հաւատարմութեան կանոնի մարդավայել են բանք  
քո, ևթէ յապագայն ոչ սարջացեալ յուսահատեսցիս: Արդարև ըստ  
արտաքնոցն առածի, զոր ինչ կորոյս ոք ի վայրկեան ժամանա-  
կաւ ի համայն կեանս իւր ոչ կարէ ունիլ զնա վերստին, զի կարի  
անագան են վաղուեան կեանք:

### Ձիադ առաւեցայ ի Պետրուրգ:

Ձկնի աքսորանաց Գրիգոր պատրիարգի և փոխարկութեան  
Պէրաթ Ծէրմանից մերային Ամիրայք ի Հոկտեմբեր 14 զստորա-  
գրեալ Ազգային Մահազէր և զայլ հարկաւոր գրեանսն, հանդերձ  
ճանապարհի ծախիւք, ընդ որում ուսեան զեսպան Թամարոֆը  
ի կողմն Յօհաննիսեանց և Դաւթեանցն էր, Անգլիացւոց Դեսպա-  
նէն պաշտօրդ, և յանձնարարութեան գիր ի վերայ գօնսօլին Բուզ-  
րեշու առեալ ի նոյնմբերի 2 առաքեցին զիս: Եւ Բուզրեշի գօն-  
սօլն առաքեաց ի Եաշ առ գօնսօլն Ռուսաց, որոյ բաշտօրթոֆը  
մտի ի սահման Տէրութեան Ռուսաց, մերձ տուպասատու և Գրի-  
գորիօպօլու Գրիւլիեան սասցեալ քառանդինն, յետ լրութեան  
քառանթինին ևկաք ի Գրիգորիպօլ հայոց քաղաք: Եւ անդ պա-  
տահեալ Պավէլ Պետրովիչ Թումանովը կուսակից Գրիգոր ևպիս-  
կոպոսին Յովսէփեան և նովաւ Դաւթեան, որ կամէր խափան լինել  
ճանապարհին իմոյ, որովհետև ոչ զճանապարհսն գիտէի և ոչ  
զլեզու ուսաց, ընկերակից առի ընդիս զՄատթէոս Տէր Յօհան-  
նէսեան ի Գրիգորիօպօլու, զիշերայն գնացեալ անտի, հասեալ ի  
Եալթայ սասցեալ տեղին, առաք անտի գիր ճանապարհի, որ  
կոչի պաղօրժնու: Ապա սլացեալ սուրհանդակաւ կամ փոշտիւ  
հասաք ի Մօսկոֆ և անտի ի Պետրուրգ ողջունեալ զկայսերանիստ  
քաղաքն, համբուրեալ զԱջ Եփրեմ Արքեպիսկոպոսին և պատահեալ  
տեսութեանց Վեհազն իշխան Ազայ Մինաս և Ազայ Յովակիմ  
Հազրեանց ի 1802 և ի 23 գեկտեմբերի, յաւուր տօնի Դաւթայ  
մարդարէին, բայց Աւագ եղբայր Վեհազնեաց՝ Ազայ Յօհաննէսն,  
վախճանեալ էր յայնժամ: Կայր Տիկնանց Տիկին Կատարինէ Իւ-

վանութեան, որք մերընդովք իւրեանց սիրով ընկալան զնուստութիւն իմ:

### Արդիւնք գնալոյն իմոյ ի Պետերբուրգ:

Իբրև ժամ եղև մեզ մատուցանել զՄահադարադրութիւն և զաչքունական գրուածան Ամիրայից առ Արքեպիսկոպոսն Եփրեմ, և առ վեհազնեայ իշխանապետ Աղայ Մինաս և Աղայ Յովակիմ Լազրեանսն:

Եւրոբիական քաղաքավարութեամբ զառաջինն՝ վեհազնեայքն մեղադիրք վնիլ ցուցին մերազնէիցն Պօլսոյ իբր անհաստատ ի բանս, և զիւրափոխս ի գործողութիւնս, որովք ծանրաբեռնին օր ըստ օրէ գծգոնութիւնք ինքեանց և յաճախին ազգային ամօթանք ի մէջ եւրոբիական լուսաւորեալ Տէրութեանց, Այնու զի Պօլսեցիք, ասէին յառաջագոյն՝ թէ Թամարով զեւսպանն հեռացի յազգային գործոց մերոց, մեք ամենայն յօժարութեամբ ունիմք Օսմանեան Տէրութեամբ զԴանիէլ Սրբազան հաստատեալ ի կաթողիկոսութիւն: Մեք, ասեն, փոխանակ միայն զզեւսպանն հեռացուցանելոյ, զԿայսերական Արամատ, աշտինքն Հրովարտակի ինքնակալէն յանուն Դանիէլի ընկալաք հրամանագիրս գրեցուցաք առ հուսակալսն առ Շահգասէն, առ Երևանու սարդարն և առ այլ իւանսն:

Պօլսեցիք փոխանակ եղբայրական շնորհակալութեանց, անհաստատ բարուք օր քան զօր զամօթանս յգացեալ ծնանին մեզ և ինքեանց:

Առ այս մերձ իրաւանց ըստ գտանաց նոցա, նուստութիւն իմ, անցեալ գլխոյ զամարգական ներգործութիւնսն խամսեցի Գրիգոր Պատրիարքին առաջի արարեալ, անմեղադրելիս ձեացուցի զմերազնեայն Պօլսոյ, և զԹամարով զեւսպանն յանցաւոր վնել գործովքն ցուցի նոցա:

Ապա վեհազնեայք խորախոհ եղեալ ևս զոտէպնդեալք, առին ինէն զպաշտօրթն իմ, որ էր յԱնգլիացւոց զեւսպանէն, և ոչ ի Ռուսացն, նոյնպէս զմահզէր և զայլ առանձնական գրութիւնս Ամերիկայիցն, տարեալ մատուցին խաւարանի կաշիկ օտարակաւաց զատարանն, ծանուցանելով զպատճառ անուղայ սլաշտօրթին իմոյ զվնելն Անգլիացւոց զեւսպանէ, որ ոչ էր Մանուէլ անուամբ, այլ Կարապետ վասն երկիւղի Թամարովին:

Ի Պետերբուրգ էր և մեծ սլաշտպանն Դաւթի, Գրիգոր կախկոպոսն՝ հարուստ կայուք, վախճանեալ Յովսէփ կոչմամբ կաթողիկոսին, և սպասէր առնուլ ի Պօլսոյ ի Դաւթեանց լուր՝ անկման խամսեցի Գրիգոր Պատրիարքի, ունելով թղթագրութիւնս ընդ

Թամարով դեսպանին և ի Ղալաթիոյ զէնճերլի խանն եղեալ  
եաղճի Գէորգին, զի գորացեալ ինքն Գրիգորն Յովսէփեան, զնի-  
րեմ Արքեպիսկոպոսն հանեալ տիրեսցէ վիճակի նորա:

Վերագարձեալ Յօհաննէս պատրիարզն իւրայնովք, գիտելով  
զդնալն մեր ի Պետրբուրգ, ծանօթ և անծանօթ անձանց անուամբ,  
Սուլթան Պայազիաու սուա կնքովք, վեց հարիւր կնիքս եղեալ  
ի վերայ մահաբրի միոյ, իրր յանուն միաբանից գրեալք, մա-  
տուցանեն յիշեալ դեսպանին, և նա առաքէ առ Կայսրն:

Յորում յետ բազում բանից, զքեն և դայս առ դեսպանն  
Թամարով, թերես յայտնի եղեալ է գերագանցութեան ձերում,  
թէ որքան տառապանս կրեաց և կրէ ազգ մեր ի խռովարկութենէ  
նփրեմ Արքեպիսկոպոսին Հաժտարիանու, մանաւանդ այժմ մինչ  
յաւելաւ և նամանաւանդ և նորոգ ընկեր խռովութեան, աստի  
փախուցեալ Մանուէլ վարդապետն Զայլն ամենայն այս խնդրա-  
դրոյ, պատահօղ բանասէրն ի կշիռ գրութեանցս և ի սոյն համա-  
ռօտութեան յընթարձակ պատմութենէս կարէ գիտել, դոյզն հա-  
ւատչէիւս խոհականք կարին ենթադատել՝ թէ որքան զօրեղ ոխերիմ  
թշնամիք էին ախոյանքն մեր և զոր ինչ անօրինեաց գալստեամբ  
մերով նախասահմանողն տեսանի արդ:

Առաջարկեցաւ Թամարով դեսպանին Պօլսոյ իւր գործն  
յանձնել այլում, ինքն զալ ի Պետերբուրգ, որ եկեալ յետ վեց  
ամսոց, չքմեզս եղեալ առ վեհազնեայս՝ խնդրէր զմիջնորդութիւն  
նոցա: Գրիգոր եպիսկոպոսն Բարձրագոյն հրամանաւ ի 1803 և  
ի փետրվարի 12 արտաքսեցաւ ի Կայսերանիսա քաղաքաց, զնալ  
ի Նովորիսիակ կուպեանին, և անդ աալ զազգապահանջ հաշիւնս  
նփրեմ Արքեպիսկոպոսն հաստատեալ մեաց յԱռաջնորդութեան  
իւրում: Հրամայեցաւ Թիւֆիզու կուսակալ Յիցիանովին կարեօր  
եղանակաւ հետել և նստուցանել զԴանիէլ Սրբազանն յԱթոս  
իւր: Մահգէրքն Յօհաննիսեանց յանպիտանս համարեալ ի վերայ  
օրինակի նորին աշխատասիրեցաք զկշիռ գրութեանցն:

### Հաշուապահանջութիւն մեր ի Գրիգոր եպիսկոպոսէ:

Օրէնք հաշուապահանջութեանց դատախազին ներկայ լինել  
հրամայէ, Գրիգոր վարդապետ կամ եպիսկոպոսն՝ որ արտաքսե-  
ցաւ ի Ս. Պ. բուրգու, զնացեալ ի Նովորոսիսի կուպեանին ի Գրի-  
գորիպօլ հայոց քաղաք, յորում էր առն իւր, սպասէր հաշուէ-  
պահանջին:

Վասն որոյ վիճակաւ որ Արքեպիսկոպոսն և վեհազնեայ Ազայ  
Մինասն ետուն մեզ զհետեւեալ փոխանորդութեան զիրն:

ԵԲարձր Արժանապատիւ Մանուէլ վարդապետ:

«Մեր թէ ի սուրբ Աթոռոյն Էջմիածնի, և թէ ի բոլոր Հայոցն Ռուսաստանու ունելով գիտիանորդական հաստատուն օրինաւոր գրութիւնս առ ի պահանջեալ զհաշիւ ի Գրիգոր վարդապետէ, յըսպասաւորէ—հանգուցեալ Յովսէփ Արքեպիսկոպոսի Հայոցն ուսաստանու, որովք խնդրամատոյց լեալ էր մեր նորին Կայսերականի Մեծութեան, և ի նմանէ Ամենողորմածարար հրամայեցաւ յանցեալ թիւ 1802 Հոկտ. 21 նոյնպէս 1803 Փետր՝ 12 անփոփոխ կատարուին բարձրագոյն հրամանի, գնալ Գրիգոր վարդապետին ի նովորոսիսկու կուպեանայն, և անդ տալ մեզ զԱթոռային և զազգային պահանջելի հաշիւան:

Հարկ էր և մեզ գտանիլ անդ, ուր հաստալալ բանիւ յայտնել զամենայն պահանջելիսն մեր, բայց մեք տատ ի Ս. Պ. և այլ ծանրագոյն գործովք Սրբոյ Աթոռոյն գրադեալ լինելով ի կողմանէ մերմէ այսու կատարեալ փոխանորդական և վէքիլական գրով զձեզ փոխանորդ կացուցեալ, խնդրեմք՝ որ յանձնառութեամբ գնացեալ յիշեալ կուպեանայն, ուր Գրիգոր վարդապետն ունի գրնակութիւն իւր, սոյն մեր գրոյ գորութեամբն, և բոլոր առ մեզ եկեալ պահանջողութեանց տուժարօք և գրովք, թէ զԱթոռային պատկանելեաց թէ Գրիգրիպօլցւոց և նախիջևանցւոց եկեղեցական անօթոց, և ի հնգու եկեալ ապարանացն, գորս յանձնեցաք ձեզ իրաւամբք տեսցեա զհաշիւան ընդ Գրիգոր վարդապետի և ժառանգացն հանգուցեալ Յովսէփ Արքեպիսկոպոսին Արղութեանց, որ քեզ հաւատացեալ եմք, և յինչ զատաստանաւն առ սոյն նիւթ պատկանեալ գիր ի քէն տայցես, մեզ ընդունելի է, և ոչ ունիմք քո կամեցողութեան ընդդիմանալ: Սոյն գորութեամբ յայտնեալ եմք Բարձրագոյն կառավարութեան Հօր Տէրութեան և գրեցեալ Անբասնու քաղաքական Կուպեանաթ գերագանց Օկուլովին:

(Իսկական գրեցեալ է) Եփրեմ Արքեպիսկոպոս Հայոցն Ռուսաստանու Սրբոյ Աթոռոյն և Ազգային վէքիլ ի 1804 յապրիլի 12) Մինաս Աղազարեանց,  
 ի Ս. Պ. Բուրղ)

### Գնալն իմ ի Գրիգորիպօլ:

Ի Մեծարանս խնդրանօք հրամայողաց Արքեպիսկոպոսին Հայոց Ռուսաստանու, և Ազգային բարերար վէքիլ վեհազն Աղայ Մինասի, ի 15-էն ապրիլի ելեալ իմ ի Ս. Պետերբուրգու, ժամանեալ ի Կուպեանին նովորոսիսկու ի Թերսօն քաղաք առ գերագանց Կուպեանաթ նորին Օգուլովն մատուցեալ նմա զվէքիլական գիրն հետեւեալ խնդրագրովս, զի և ի կողմանէ իւր զպարտու պատշաճ կարգադրութիւն յայտնեսցէ որոց հարկն է:

«Չերդ գերազանցութիւն Թերսոնու քաղաքական Կուսպետ-  
նաթ Ալէքսէ Տէօրիչ և զանազան նշանակիր, Ողորմած Տէր: Ընդ  
սմին մատուցանեմ ձերդ գերազանցութեան ի Հայոցն Ռուսաս-  
տանու Արքեպիսկոպոսէն Եփրեմայ, և ի մերազնէից վէքիլ գե-  
րազնիւ նատւորնի Սավէթնիկ Մինալազրիչ Լազրովէ առ իս յանձ-  
նեցեալ գերկու փոխանորդութեան գիրսն ընդ Գրիգոր վարդա-  
պետի հաշուապահանջութեանցն, թարգմանութեամբ ծանօթանալ,  
և գիտն առիս վերադարձուցանել: Ես ի կողմանէ իմմէ քննիչ  
ընկալնում զընակիչսն Գրիգորիպօլու զմերազն նատուորնի Սա-  
վէթնիկ զՊավլը Պետրովիչ Թումանովն, «և զԹիթիւլէրնի Սավէթ-  
նիկ Իւվան Թրիստաֆօրիչ Սաթովն: Եթէ կարևոր է ինձ յանձ-  
նեցեալ գրովք մտանել ի հաշուապահանջութիւն ընդ նշանակեալ  
ւարդապետի, ինդրեմ և ի կողմանէ գերազանցութեան քո հար-  
ւելաւոր օգնականութեան շնորհիւ, գրեալ յիշեալ վարդապետին,  
«զի և նա ի կողմանէ իւրմէ զկամեցեալ գերկու անձինս յատկա-  
ւոցուցէ, որովք առանց յերկարաձգութեան աւարտումն եղիցի  
«նշանակեալ հաշուապահանջութենէն:

Չերդ գերազանցութեան Ողորմած Տէր, խոնարհագոյն աղօ-  
թարար ծառայ

(Իսկական գրեցեալ է) Մանուէլ վարդապետ  
 Ի 1804 մայիսի 14  
 Ի Թերսոն քաղաք:

Յէ՛հ երկուց առուց պատասխանի՛ք Կուսպետնաթի՛ն առ իս:

«Բարձր Արժանապատիւ Մանուէլ վարդապետ,  
 Ողորմած Տէր իմ,

«Բարձուցանելով այսու գրով առ ձեզ զվէքիլական գիրն,  
 որք տուեալ են ձեզ յԱրքեպիսկոպոսէն Եփրեմայ, և ի նատուորնիկ  
 Սավէթնիկ Լազրովէ, որով ունիս փոխանորդութիւն առնուլ հաշիւ  
 ի Գրիգոր Արքեպիսկոպոսէ, յայտնեմ ձեզ՝ ողորմած Տէր իմ, հա-  
 մաձայնելով նոյն վէքիլագրութեանց, գրեալ եմ նախ առ արք-  
 եպիսկոպոսն Գրիգոր, զի նա առանց ժամանակ յերկարելոյ ըստ  
 պահանջութեան ձերոյ, ի ներկայութեան նատուորնի Սավէթնիկ  
 Թումանովին Թիթիւլէրնի Սավէթնիկ Սաթովին, նաև ինքն ի կող-  
 մանէ իւր զով հարկաւոր համարի՝ կացուցանէ և տայ ձեզ, ըստ  
 ամենայնի ի վէքիլական գրոյդ գրեցեալ զօրութեամբն զհաշիւն  
 առանց երկարաձգութեան:

Եւ երկրորդ գրեցի Գրիգրիպօլու մաղիսթրաթն զի նա ամե-  
 նայն գրութեան ձեր օրինաւոր հաստատութեամբ տայցէ զկա-  
 տարումն առանց յերկարելոյ ժամանակի:

Եւ եթէ այլ ինչ հարկաւորութիւն լինիցի ձեզ, ողորմած տէր իմ, ի կողմանէ իմմէ օգնականութեան, բարեհաճեցիս յայտնել ինձ, իսկոյն և ես ի հարկէ կատարելոց եմ զամենայն զոր ինչ յինէն և ի պարտաւորութենէ իմմէ իրաւամբ կատեալ լինի Սենիմ պատիւ լինել պարտաւորական ծառայութեամբս Ողորմած Տէր իմ, ձեզ խոնարհ ծառայ

Ալէքսէ Օկուլով

16 մայիսի 1804 ի Սեբսօն N 1443.

Այսպիսի պարագրութեամբ նոյն մայիսի 21 մաի ի Գրիգորիօսի, եւ յետ այնորիկ որք ի խարդախութեանց մերազնէից՝ ելին մեզ ընդ յառաջ՝ կարգ բանիցն ցուցանեն:

### Պատենա՞ր ի Գրիգոր վարդապետէ հաւուապահանջութեանց:

Ի պատերազմէ ընդ Օսմանեան Տէրութեան յաւուրս Բնեազ Պօղէմզինի ի Կայսրութեան Կատարինէ թաղուհոյն Յովսէփ Արքեպիսկոպոսն ընդ զօրացն Ռուսաց լինելով յայն կոյս թունայ, որ է Դանոք գետոյն, զբնակիչ Հայկազան ի Պէնտէր, ի Քլլի, ի Ղաշան, յԱղքիւրման, և յԻսմայիլէ շարժեալ երկր յայս կոյս Տիւկայ կամ Թոււլայ կամ Նեստրայ գետոյն մերձ Տուպասարու ի տափարակ տեղւոջ շինեալ քաղաք Գրիգորիօսի անուն, բնակեցոյց զնոսա անդ:

Սակայն յիշեալ քաղաքաց եկեղեցական զանօթան առ ինքն ժողովեալ խոստացմամբ թէ ի Գրիգորիօսի ունի զեկեղեցիս շինել և նոքօք զարթարել: Եւ թէ փոխանակ տանց ձերոց՝ տուն և այգեաց՝ խանութից ձերոց, այգի և խանութ ունիմք տալ, ողորմելիքն և ոչ զմին կարացին աստ տեսնել և որքան դումար շնորհեցաւ վասն այս զարթականացս, ընկերարածին արարեալ են զրկողութեամբ հասարակաց:

Նոյնպէս ի Հնդկային մերազնեայց հարիւր հազար ուրբոյ նուրբ ապրանք եկեալ է յանուն նոր նախիջեանու վարժարանի, ոչ զկայսն տեսեալ են և ոչ զվարժարանսն ունին:

Պավլ Պետրովիչ կայսրն քսան և հինգ հազար ուրբի շնորհեալ Գրիգոր վարդապետին, որ ի Գրիգորիօսի վանք և Աւագ եկեղեցի շինեացէ, և ոչ մինն կայ ցայսօր: Յընթացս քսան և եօթն ամաց առաջնորդութեան Յովսէփ Արևոյ, էջմիածինն նուիրակութիւն և այլ արդիւնք ինչ ոչ է ստացեալ:

Վասն այսոցիկ ամենայնի խնդիրք և աղաղակք յետ զյետէ դիգեալ էին առ Առաջնորդն Եփրեմ և առ Վեհազնեայն մանաւանդ ի Գրիգորիօսուց:

### Փոխարկութիւն Գրիգորի պօլցոցն:

Սովորութիւն է Ռուսաց տէրութեան երեք տարին մի անգամ գրադաքական և զգաւառական դատաւորան փոխարկել, զնորոգան ընտրութեամբ և վիճակարկութեամբ ի տեղի նոցա կացուցանել: Ի Գրիգորի պօլ Առաջին խնդրագործ դատաւորք և կառավարիչք փոխարկեալք ըստ սովորական կանոնի, Գրիգոր վարդապետն անդ յայս նուազ ներկայ գտեալ, զաղքատ և զաննշան անձինս յառաջացուցեալ յայն պաշտօն գաղեալ հնարաւորութեամբ, ապա կաշառօք զնորոգան գրաւեալ, գիր ի նոցանէ առեալ, իբր թէ զհնդու եկեալ ապրանս ըստ վերոգրեցելոյս վասն ուսումնարանաց, տուեալ իցէ նոցա ի տեղի կայսերաշնորհ 25 հազար ուրլոյն և ազատեալ է ի պարտուց կայսերութենէ ի շինութեան վանուցն և եկեղեցւոյն:

Նշանակեալ միջնորդօրն մեր Ազնիւ Թումանօվի և Սաթովի գրաւ առաջարկեցաք վարդապետին տալ մեզ զհաշիւն, պատասխանեաց՝ ևս մի անգամ քաղաքացւոց տուեալ ևմ զհաշիւն իմ, և ոչ ունիմ պարտաւորութիւն այլ ումեք տալոյ դայն: Հարցաք խնդրագործօղ հասարակութեան զայնմանէ, պատասխանեցին զանտեղեկութիւն առաջաւոր անձինք: Հարկեցաք դրել առ գաւառական կառավարիչ յիշեալ գերագանց Կուպեանաթօր Օկուլովու Յորմէ յանդիմանութիւն եղև նորոգ դատաւորաց և հոգարարձուաց Գրիգորի պօլու, որ ինքեանց անպատշաճ գործոց ձեռներէց լինիլ ասէին: Եւ հրամայեաց Գրիգոր վարդապետի անպատճառ տալ մեզ զհաշիւն:

Սակայն Գրիգոր վարդապետն իւր հարուստ կայիւք, լեզուաց, օրինաց, յատենակալաց և իշխանաւորաց ծանօթութեամբն, իմ օտարական անձանօթութեամբ ընդ ումեք այնպիսեաց և անտեղեկութեամբ լեզուի, ուս զրազրի և թարգմանչի կարօտութեամբս, մանաւանդ ազբաօին կարեւորութեամբ, որ միայն ի կայսերէ, տարեկան երեք հարիւր ուրլի ոտճիկ ստանայի և հազիւ նոյն չափ ի փողովրդոց արդիւնք առիս գային: Տրամարաշխեացեն խոհական ընթերձանք, և արդարադատ քննիչք, թէ այս վեց հարիւր ուրլի գումարն որ հարկաւորութեանց իմոց կարևոր լինի պիտոյացուցանել ուս զրազրի, որ տարեկանաւ պահէի առ իս, քանդի եւրօպական զգուշութիւնք չօրս կարգ միոյ գրութեան պահեն. նախարատակն, իսկն, յօրադրութիւն և առ առաքիչսն իմ ծանուցանելին, որոց վասն հարկաւորի յիշեալ տարեկան զրազիրն, թարգմանչին, սպասաւորաց տան իմոյ, մեր զգնելեաց և ուտելեաց, ապա թղթոց և զմօոց:

Եւ որքան գրէի առ առաքիչսն իմ, միշտ ի նոցանէ դրուատ  
և շնորհակալութիւնս ստանայի արի և խոհական կառավարութեան  
իմոյ, բայց հացագործ և մսավաճառն այլովք զփող խնդրէին և  
ոչ զշնորհակալութիւնս:

Սակայն սղորմութեամբն վերին, թէև շարունակ ութն ամ  
ի 1804 թուականէ մինչև ի 1812 ամն, անմիաբանութիւնք Գրի-  
գորիօպօլցւոց, դարանակալութիւնք Գրիգոր վարդապետին և աղ-  
քատութեան դառնութիւնք տանջեցին զնուաստութիւն իմ, բայց  
արդարութեան եղջիւրն զօրացեալ, յաղթեաց զանիրաւութիւն,  
օրինօք տիրեցաք Ասայ պահճային, ութն կրպակացն, Առաջնոր-  
դարանին, հինգ սնտուկ հնտու նուրբ ապրանացն, քսան և հինգ  
հազար սուրբ կայսերական շնորհն զարձուցաք ի վերայ Գրիգոր  
վարդապետի և Արդութեան ժառանգաց ի պարտահատուցութիւն:

Ի 1809 Տէրունեան թուականի զհինգ սնտուկ յիշեալ ապ-  
րանսն առաքեցաք ի Նորն Նախիջևան յեփրեմ վիճակաւոր Արք-  
եպիսկոպոսն և նա շնորհելով Նոր Նախիջևանու մերազնեայն  
հասարակութեան, սրք պիտոյացուցին ի շինութիւն Սուրբ Լու-  
սաւորչի Աւագ եկեղեցւոյն և յիշատակարան մարմարոնեայ քարն  
յանուն հնդստանցւոց և Յօհաննէան Աղայի, եղեալ կայ առ դրան  
նոյն եկեղեցւոյ հարժային կողման, թէև վարժարանքն տակա-  
ւին անբարեկարգ:

Իսկ թէ ո՞յր վասն ի նախարարաց ոմանք, ընդ որս և մեք,  
զայս Գրիգոր Արքիմանտրիտ այսինքն վարդապետ կոչեմք, և այլք  
եպիսկոպոս գրեն: Քանզի Դաւթի բռնակալութեամբ կաթուղիկոսու-  
թեան մեծգորաւիզն սա էր և ի նմանէ ձեռնադրեալ: Ի ժողովն  
Իւշքիլիսէու լուծին զԴաւթին և զձեռնադրեալսն ի նմանէ նոյնպէս  
և Մեծ Կայսրն Ռուսաց զԴաւթին լոծնի պատրիարգ կոչեաց,  
այսինքն սուտ, և զԳրիգորէ հրովարտակքն գրեցան արքիմանտրիտ:  
Իսկ հետաւոր նախարարք, ընտանութիւն ընդ Գրիգորի ունելով ի  
հաճոյս նորին ասէին, և երբեմն գրէին եպիսկոպոս կոչմամբ, այս-  
քանիս շատ լիցի հետաքննին բանասիրաց:

### Քօլեան Աբրահամ Եպիսկոպոսի գալն ի Գրիգրիօպօլ եւ վերադառնալն:

Որպէս աստ ի 12 թղթահամարէն մինչի 20 գրեցան վասն  
բողմաշարչար Սրբազան Դանիէլ Հայրապետի, Գրիգոր Պատրի-  
արգի և մեր ի Պետերբուրգ զնալոյն, և Յօհաննէս Պատրիարգի  
հետևութեանց յօգուտ Դաւթի բռնակալի: Զգերագոյնն աստ է  
տեսանել: Քանզի յիշեալ Պատրիարգն Յօհաննէս, գիտելով թէ ոչ  
կարասցէ գրաւել զբարեհաճութիւն կամաց Սուրբ կայսերն Ռու-

ասց, միշտ կասկածելի է իւր պատրիարքութիւնն և Դաւիթն, որպէս եղևն իսկ:

Վասորոյ զՔօլեան Արքանամ եպիսկոպոսն, որ յայնժամ կայր ի Փօլիս շատադով Դաւիթ բանակալի, Աթոռային հարուստ կայիւք, թէև խատադոյն արգիլեալ էր մերս հոգևորականաց, առանց վկայական գրոց Արքազանին Դանիէլի և Արքեպիսկոպոսին Եփրեմայ՝ մուտ գտանել ի Ռուսիայ, փոխեալ զպաշտօնն և զանունն յիշեալ եպիսկոպոսին Քօլեան, Գրիգոր վաճառական կոչմամբ, ըստ որում նոր դեսպանն, ոչ որպէս զԹամարով կարէր ինքնակամ պաշտպան լինել նոցա, ծպտեալ Գրիգոր անուամբ պաշտօրթ ի նմանէ առեալ, ևս բազմակնիք մահակրական խնդրագործ գրովք, ի ծովու անհետ ընթացիւք առաքեալ գայ հասանի յԱտէս քաղաք, և անդ խարկանօք ի Մեծ կոմսէ կմմանուէլ Յովսէփիչ Տիւք Տէրէշէլէլ ստանայ զպատօրօժնոյ, ի 1805 և ի 5 սեպտեմբերի գայ ի Գրիգորիտպօլ ի տուն խորհրդակից հաւատարմի իւրեանց Գրիգոր վարդապետի, զի ըստ դասատու յառաջադրութեան նորա սլացի ի Ս. Պ. բուրգ, ըստ որում վաճառականն վաճառեցէ զբարեկարգութիւնն և զխաղաղութիւնն Ազգին մերոյ, հանդերձ Աթոռային հոչակեալ անբարեկարգութեամբքն:

Թէպէտ ոչ էր նա մեզ նախածանօթ դիմօք, սակայն ի լսելն մեր զփառաշուք կերպարանօք վաճառաշահութիւնն, ստիպեալ ի կարծիքական ենթադատութեանցս՝ զնացի ի յարգել զծպտեալ հիւրն ի տան հիւր ընկալ Գրիգոր վարդապետին: Եւ ի մտանելս կալայ գաջ նորա ի համբուրել և նա առժամայն մոռացեալ զլիերջին դարանակալութիւնն իւր, առաջին պաշտօնի վստահութեամբն, թոյլ ետ ինձ համբուրել գտուրք Աջն, և ինքն փոխադարձ համբուրեաց զձեռն մեր, ասելով իմ առ նա, Աստուած օգնական Հայր Արքազան՝ շնորհաբեր լիցի գալուստ Տեանդ:

Զգացեալ զմիտս իմ Տանուտեանն, խոժոռութեամբ ասաց՝ ընդէր անպատիւ առնես զեկեալ հիւրն իմ, ասեմ ցվաճառականն, ձերդ Բարձր Արքազանութիւնն, զինչ անպատուութիւնս յանդգնեցայ ընդ սրբացեալ պատուոյդ: Կրկնեալ տանուտեանն այդ իսկ են անպատուութիւնք առ նա, զորոյ զձեռն համբուրես, կոչես Հայր սուրբ և Արքազան, ուստի՞ գիտես զկարգաւոր լինիլն դորա, ասացի ի փառաշուք կերպարանաց և յանկղ դիմացն: Ասէ բազմահնար տանուտէրն, ո գիտէ թերևս թուրք իցէ, ասացի՝ եթէ իցէր յայն կերպարան, ասէի՝ էֆէնդի հօշկէլտին, Արդ, խնդրեմ զինչ կոչուէն ունի յարգելիս այս, ասէ, աշխարհական և վաճառական ոմն է, և փոխարկեալ իմ զբանս՝ ասացի, Ազայ բարի ես եկեալ, ապա ըստ աշխարհիկ կանոնի հարցի զուստն և զպատճառ գալուտեանն, սլատասխանեաց վաճառականն, զոչ Բարեկոնացի,

հնդկային վաճառական, ընկեր վաճառոյն իրր քանի ամօք յառաջ եկեալ ի Ռուսիայ, ոչ ունելով զմամնէ գիր, յայլոց լսելով յար կոյս շրջելն՝ անգոյ եղջերուաքաղ ընկերոջն, եկեալ է ի խնդիր:

Անգանօք ի միասին վայելեցաք զչայ և զփունջ հարսուս ասնուտեաան, և ի մեկնելն մեր վաճառականն համբուրեալ զԱջ մեր, մեք խնդրեցաք ի խոհական Տանուտեաանէն յերկրորդի օրն շնորհարեր լինել առ մեզ ի ճաշ և խոստացան երկօքեամբք ի գալ:

Բայց զիշերայն փախուցեալ առաքէ ի Աասիլովքայ զիւզն քնեաղ Արդութովի, ի լսելն իմ այսունակ արդարարանութիւն մեծ վաճառականիս, ըստ կացուցեալ պարտաւորութեանս իմոյ, զնացեալ զլնի նորա, գտի ի տան գոեհիկ զիւղականի ճաշեալ և ննջեալ, առ ի ոչ անհանգիստ առնելոյ զսխառուելութիւն Նորին, ննջեցի և ևս առ զրան յայնմիկ, և ի սթափիլ քնոյն, եղբայր իւր Աազար և նաև կոչիւր Գէորգ, իրր սպասաւոր, ելեալ արտաքս, տեսեալ զմեզ, աճապարեաց ի ներքս տալ զգացումն եղբօրն, մտեալ և իմ զնեա նորա, գտի ի մահճի զայրն փառահեղ, յարգանօք վերարեբեալ զայս, այժմ հաւաստեալ. աստուած օգնական Սրբազան Հայր, ընդէր ապախտ առնելով զայքատին քնակութեամբ մերով առ քարշեալ կարօտանօք Սրբութեանդ աշխատ արարէր զմեզ, ցաստ, և կառէի համբուրել զաջն վերստին, բայց ոչ ետ, ասելով այլազգական բասիւ. «դարտաշ, նէ իստէրսին պէնտէն, պէն կարգաւոր տէիլիմ, կարդաւորաան իրազ օլան, ալլահայ եազըն օլուր»:

Կրկնեալ եմ թէ կարգաւոր ես՝ թէ ոչ չէ ինձ փոյթ, միայն ազգասիրարար խնայելով զկեանս քո և զկայսդ զորս ընդ բեզ ունիս, բերեալ եմ ընդիս քանի հարկաւոր գրութիւնս ընթեանուլ, և եղբայրարար յայտնել կողմանցս զստոյդ զորպիսութիւն, յետ այնորիկ յոր կողմն կամիս երթիցես բարեալ:

Ասաց՝ նասլքեանդ տրւար, ասացի. այժմ ընթեանում և կիմանաս, ասաց. «պէն շօճուխլուք տան շքքմիշիմ պիզիմ վիլահատան, ունութմիշքմ էրմէնի տիլինի, միւնքիւնիսէ թէրճիւմէիթ քի սնկնայիմ, ասացի տամ քեզ, Ինքնին ընթերցիր, ասաց. «Պէն էրմէնիճէ օգումագոլմը թուրքճէ օգումիշքմէի պիւլիւրիմ թիւրք տիլինի, Հարկեցայ ի սէր նորընծայ թուրքացելոյս ընթեանուլ նախ՝ զիւր գիրն, որ ի Պօլսոյ գրեալ էր առ Դաւիթ կաթուղիկոսն յետ բազում բանից և գայս, «Աստուած օրհնէ զձեռնդ և զսնունդ Գէորգ աղա եկովին, որ այժմ քան գայս աւելի բարեկամ չունիս սրբազան Հայր, թէև այս ի կողմանէ զբամոց նեղ անկեալ, յետս կայցէ, մեր բանն խարտալ կըլինի, երկիցս սայի զըրկեցինք, որ փող հասուցանես մեզ, տակաւին սրատախան շեմք ստացէր»:

Ապա ընթերցայ զգիր նոյն Գէորգ Ազանկովին, որ յետ այլ բանից ծանուցանէ, «Այժմ քո սրբութեանդ գործն ի Պօլիս յոյժ դժուարին կըն, եթէ օգնութիւն կամիս, ի Ռուսաստանու և ի կայսերէն կարևս ստանալ՝ պարտիս յատուկ անձն հարուստ կայիւք և ընծայովք առաքել, առանց դրամոց և ընծայից գնացողն ի Ռուսաստան, բորոտ շան նման է, որ ոչ թողուն ի տուտ Ահա ասեմ, շուտով մարդ զրկէ, բայց հասարակ մարդն գործ չի կարէր տեսնել անդ, աստ կղևալ քօլեան Արրահամ Արքեպիսկոպոսն առաքէ, Յովսէփ սրբազանի կտակն քեզ պատճառ դիր, կտակին վկայ ունիս, Գրիգորիպօլու Գրիգոր եպիսկոպոսն, մէկ վկայ ալ ճարէ: Թէ Արրահամ եպիսկոպոսն աստի զրկէս, ի սակաւոյն վաթսուն քէսէ դրամ, և այլ ընծայք յոյժ հարկաւորք են և՛ն:

Յետ այսոցիկ ընթերցայ և զայն բարձրագոյն հրաման, որով Գրիգոր վարդապետն արտաքսեցաւ ի Պետերբուրգու, տալ մեզ զհաշիւն, և զբոլորն այլազգական բառիւք ծանուցանի անձանօթ հայկաբանին:

Նհարց՝ պուքիահըդ լար նիրաէն սէնին էլինէ տիւշտուէր, ասացի, սիղըն վերտիզընըզ գուշարըն աղղընտան թիւշտի, պէն ալտըմ:

Ապա ետու նմա զեզրայրական անկեղծ խրատ՝ այսպէս Արդ. տեսանեմ, որ հաստատեալ ես ի միտս քո բանիւ ուսուցչացդ, անյայտ պահել զքեզ, որպէս և զհայկաբանութիւնդ թագացանեա, ընդդէմ Տէրունեան վճռոյն, զի ոչինչ է ի ծածուկ, որ ոչ յայտնեացի, ձեանաս վաճառական, բայց դու ես կարգաւոր, եթէ իցես կարգաւոր՝ ոչ ես Գրիգոր, այլ, Արրահամ՝ եթէ Արրահամ՝ դու զքեզ գիտես եպիսկոպոս, բայց մեք ոչ տամք զնոյն պատիւ քեզ, զի յապօրինաւոր բոնակալէ ունիս զայն կոչումն: Իայց թէ զինչ և իցես, կարևոր է ինձ այժմ կալանաւորել զքեզ, և ապուլ ի քէն զգումարան, զիչսդ և զգրեանսն: Սակայն մի լիցի այդ յինէն առ քեզ, լուր ինձ և դարձիք յապահով տեղի, կալ քեզ բնակութիւն ապրել բարեպէս ընդ քեզ եղևալ հարստութեամբդ և փութով լսես զկատարումն անփոփոխ կայսերական հրամանին, որ բարձեալ գ՛րաւիթն յաթոռոյն, և զՍրբազան Գանիէլ բերեալ ի մարաղայէ, բազմեցուցանելն յաթոռ: Իսկ թէ յառաջ ընթանաս, առաքչաց՝ և ուսուցչացդ յուսովդ Ռուսաց (օչին խարաշօն և զավթոին) զհարստութիւնդ ի քէն բարձեալ՝ որպէս զուսուցիչն քո Գրիգոր յանձանօթ տեղիս տատանիս:

Ի վերայ այսպիսի Նախազեկոյց զգաստութեանց ևս պնդագոյն ուրաստ կղև զինչուէն՝ որ էր, կամէր հաւանեցուցանել զմեզ զոչ գոլոյն, որ չէր:

Վերադարձեալ մեր ի բնակութիւնս՝ գրեցաք ուղղապէս

Օտեսու մեծ կուսակալին, թէ որպէս ի Պօլիս թագուցեալ զեպիսկոպոսութիւն իւր, խարկանօք ի գեսպանէն առեալ զպաշփորթ, նոյնպէս և ի ձէնջ զպօտօրօժնօյ, խորհրդակցութեամբ Գրիգոր վարդապետի կամի գնալ ի Ս. Պ. բուրդ ընդդէմ կամաց Նորին Կայսերական Մեծութեան:

Ի հինգերորդ աւուրն հրամայեցաւ ի նոյն կուսակալ Տիւքէն առ Գրիգոր վարդապետն, որ ընդ վաճառականին ներկայացին ինքեան յորոց բարւոք վերահասու եղեալ, վերադարձուցանէ ի Գրիգորիօպօլ և զվաճառականն առաքեալ ի Նաշ քաղաք, մինչև տոցէ զհրաման ի Կայսերական Մեծութենէն: Որոց գալով վերջստին ի Գրիգորիօպօլ, դարձեալ տեսաք զվաճառականն, որ զգեցեալ զվեղար, յառաջեալ ինքն ասաց. Այժմ շիտակ Աստուած օգնական եղբայր, պատասխանեցի, Շնորհակալ եմ ի Տիւքէն, որ մկրտեալ զքեզ քրիստոնեայ, և ձեռնադրեալ հոգևորական, ծանոյց ձեզ զգօրութիւն բանից իմոց առ քեզ:

Ասաց, այժմ զինչ խրատ տաս ինձ, պատասխանեցի, խրատ իմ այն էր, զոր ծանուցի քեզ ի Վասիլովգայ գիւղն, երթ աղօթօղ լեր ինձ, որ թողու՛մ քեզ գհարատութիւնդ, զխապահով կենօք կայցես, և փութով տեսանես զարգասիս, և դնաց ի Նաշ քաղաք:

Ըստ պարտաւորութեան իմօյ՝ ծանուցի զայս ամենայն վիճակաւոր Արք-եպիսկոպոսին և վեհադնեայ Աղայ Մինասին, որք թէ որքան շնորհակալութիւնս գրեն առիս, որ ոչ ծանեցուցաք զաշխատութիւնս նոցա, մեղանք և քարտէզքն վկայեն առանց մերս շահեկանութեանց:

Ապա բարձրագոյն հրաման առ Պայծառ Տիւքն եկն, զի զԳրիգոր վարդապետն արտաքսեցէ ի Պէզարապիայ, և զՔօլեանն չի թողուլ միւս անգամ ի Ռուսիայ, վասն որոյ ի հոկտեմբեր 5 Գրիգոր վարդապետն ասաքսեցաւ ի Գրիգորիօպօլու ի սահման թիւրքաց ի Քիչնէ, որ տակաւին չէր առեալ ի Ռուսաց, քանզի ի 1806 ամի ապա եղև և այն երկիր ընդ իշխանութեամբ Ռուսաց:

Իսկ վաճառական եպիսկոպոսն Քօլեան, ըստ խրատու մեր, նոյն հարուստ կայիւք գնացեալ ի Պօլիս զառաքիչն իւր զՅօհաննէս պատրիարկն հանեալ, ինքն եղև անու երկու ամ Պատրիարկ Պօլսոյ, արտաքսեալ և անտի՛ զնացեալ Յամասիայ և ի Մարսվան Առաջնորդ, ուստի թղթագրութիւնս արար ընդ մեզ ի Ղրիմ: Եւ որպէս մեք յայն թիւ, այսինքն ի 1805 Հոկտ. 8 Պօլսոյ Յօհաննէս Պատրիարկին գրեալ էաք, զգալստենէ զվերադարձման Քօլեանին, յընթարձակ պատմութեան Դանիէլ կաթուղիկոսին տեսանի:

Չկնի սոյն Քօլեանի ի Պօլիս Պատրիարկ եղեալ էտրէնէցի

**Փալն վիճակաւոր եփրեմ Արքեպիսկոպոսի  
ի Քրիզոստոմոսի յԱյցելութիւն մեզ:**

Սրբազան եփրեմ Արքեպիսկոպոսն ընդ իւր ունելով զվազածանօթ զընկերակիցն իմ զՆէրսէս վարդապետ Աշտարակեցին և զայլ ևս տասն և հինգ անձիս զգրագիրս, զթարգմանս, զսպասաւորս, զկառս և զերիվարս: Որոյ ըստ գրաւոր յուսադրութեանցն ակնապիշ սպասէաք այցելութեան իմիք առ մեզ՝ զայս հանդէս ի 1806 ամի Տեառն դտաք շնորհարեր գալստեամբ նորին:

Յայնմ ժամանակի և Հօր Տէրութեան Ռուսաց Զօրքն անցանելով ի Պեղարապիայ և Ներսէս վարդապետն գնաց յայնկոյս, ինն ամիս շարունակելով առ մեզ վիճակաւոր այցելութիւն, երեք հազար ուրլի պարտք առաք յազնիւ Իւվան Քրիստաֆօրիչ Սաթովէն, ի պէտս ծախուց Այցելութեան, և ազգաօգուտ պարագայիցն:

Շուրավէրցի Թադէոս եպիսկոպոսն, որ ի տեղի Ղազար վարդապետին ի Ղրիմ յաջորդ էր, ելեկա առնելով սոցա ընդ միմեանս. գանկատէին յիրերաց մինչ զի կամք էր նախագահից տարագրել զՂազար վարդապետն յեկրէն Ղրիմու, ի հետևեալ տարւոյն ի 1807, Սրբազան եփրեմ հարկադրեալ երեր զմեզ ընդ իւր ի Ղրիմ. առ ի քննել գտարաձայնութեանց պատճառ երկուց հոգևորականաց Ղազարու և Թադէոսի և քանի ամաց հաշիւան նոցա տեսանելով. գուցէ արդիւնք ինչ ի նոցանէ ստացմամբ, վճարումն պարտուց Սաթովին լինիցի:

Իրրև ժամ եղև մեզ քննութեանց, գտաք զԹադէոս եպիսկոպոսն անտեղեկութեամբ գանկատաւոր և զՂազար վարդապետն մտառարութեամբ արբշիտ, այրիւք վեղարաւոր, որդուց, գատերաց և թոռանց տէր, արդիւնք ինչ ումեքէ ոչ է մնացեալ, բացի ամօթարեր աղաղակաց:

Եհաս ՚ի Ղրիմ և Ներսէս վարդապետն վերադարձեալ ի կողմանցն Մօլտօվիայու, քննեալ և նորա զգործ վարդապետացն եղիա ընդ գրեցելոյս, Թադէոսն առաքեցաւ գնալ յերկիր իւր, և Ղազարին հրամայեցաւ քէֆէի սուրբ Գէորգ վանքի արդեամբն նստել ի տան իւրում, յայնմ օրէ երկիրն Ղրիմու մնաց մինչի յերկոտասան թիւն, առանց յաջորդի:

Յաւուրսն յայնոսիկ ողորմութեամբն Աստուծոյ կատարումն եղև ընդ Քօլեան Սրբահամ եպիսկոպոսի բանախօսութեանց մերոց, որ հոգունակութեամբ Մեծի Կայսերն Ռուսաց, հանեալ

գՄրբազան բազմաշարչար Դանիէլն ի բանտարգելութենէն Մարտաշու, բերեալ բազմեցուցեալ յառաջ քան զտասն ամ յիւրանուն յատկացեալ Հայրապետական Աթոռ ի սուրբ Էջմիածին: զԴաւիթ բոնակալն նստուցանեն յայլ սենեակ եպիսկոպոսական պատուով. եւ Դանիէլ Հայրապետն գրեալ առ Նփրեմ Արքեպիսկոպոսն՝ հրամայէ, զմեզ և զՆերսէս վարդապետն փութով առինքն առաքել ի յԱթոռն. բայց յառաջագոյն յիշեալ 22 երեսի հաշուապահանջութիւնքն մեր ի Գրիգոր վարդապետէ տակաւին անկատար գոլոյն և ինքեանք ներկայութեամբ իւրեանց ոչինչ կարացեալ առնել, վճռեցաւ Ներսէս վարդապետին գնալ յաթոռն, և մեզ վերադառնալ ի Գրիգորիպօլ, որ հազիւ ի 1809 թուին մասնաւորապէս թեթեցուցաք զգործ նոյն հաշուոյն, որպէս տեսանի ի 24 երես այս գրութեանց:

Ահա առհաւատչեայ մինչև ցաստ տասն ամ ծառայութեանցս, ընկերակիցն իմ գնայ բարձրանալ ի փառս և ի պատիւ մեր վերադառնամք ի 1807 յուլիսի 3 ի Գրիգորիպօլ ի վէճ և ի դատ, մանաւանդ հատուցանել և զերեք հազար սուրբի պարտն վիճակաւոր Արհուոյն առ Անիւ Սաթոփն:

### Գնայն իմ Եաւ քաղաք եւ ի Սչովայ:

Մեսրոպ ոմն քահանայ Պօլսեցի, ի Սչովայ քահանայագործող ըստ յառաջ գրեցելոյս Գրիգոր վարդապետն, որ աքսորեցաւ ի գրիգորիպօլու, գնացեալ հասանի ի Տէրութիւն Նէմցէի ի Սչովայ, յարուցանէ աղմուկ ընդ յիշեալ Տէր Մեսրոպին, Ազատ Տէրութեան անձինք յերկուս բաժանին ի կողմն վարդապետին, և քահանային, որպէս զվարդապետն, նոյնպէս և զքահանայն հանեն յերկրէ իւրեանց, քահանայն հասանի ի Ղրիմ օգնութիւն խնդրել յՆփրեմ Արքեպիսկոպոսէ, և նա յանձնարարական գրութեամբ առաքէ առ մեզ և հրամայէ տանել զքահանայն և հաշտեցուցանել ընդ Ծօն Պարոնաց և այլոց, տալով իմ և զերթեկութեան ծախսն սոյն Տէր Մեսրոպայ, գնացեալ հասաք ի Եաւ քաղաք, ուր լուաք, թէ այլ ոմն Ներսէս անուն Արեղայ, փախուցեալ յերուսաղէմայ՝ ընակի Եաւ քաղաք յանառակ տեղիս, զրով ծանուցի Եաշու ուսաց քօնսօլին գտանել և առաքել ի Գրիգորիպօլ, լուեալ արեղային, փախչի ի մոյլով քաղաք, և լաթինացեալ առաքի ի Ղարասուպազար՝ քահանայագործել ունիթոաց, որ և զկնի արտաքսեալ անտի առաքեցաք ի Կստնդնուպօլիս:

Յայնժամ տարեալ մեր զՏէր Մեսրոպն ի Սչովայ, ընկալեալ կղաք սիրով ի մերազնէից, հաշտեցուցեալ զքահանայն, մատու-

ցաք զԱստուածային Պատարագն, վերադարձեալ ի քաղաքն Փոզկիշան, գտաք զսուրբ Երուսաղիմայ նուիրակ Յովսէփ վարդապետն յանկողնի անօժանդակելի ի բժշկաց և ի վախճանիլ նորին, ուղարկաւորեալ ըստ եկեղական օրինի, զինչսն տուժարաւ յանձնեցաք տեղւոյն օրհնեալ և բարեպաշտ իշխանութեանց մերադնէից: Անդ ի Փոզկիշան սուրհանդակաւ եհաս առիս հրամանագիր յեփրեմ Արքեպիսկոպոսէ, որ էր սուր երկսայրի խոցոտիչ հոգւոյ և մտաց. Գանդի զրէ զվախճան սրբազանին Դանիէլի, և վեհադնեայ Ադայ Մինաս Լազրիչի, և զիւր ընտրութիւն ի կաթողիկոսութիւն, վասն որոյ հրամայէ թողուլ զամենայն գործսն իմ, գնալ հասանիլ ինքեան ի նորն նախիջեան, որոց թէպէտ տուեալ է զիմ առաքեցեալ հինգ սնտուկ հնտու ապրանսն, բայց ոչ է ստացեալ զղապղազիրս զքիպիտանցի, առաջարկէ մեզ գնալ և առնուր:

Ահա վերակրկնութիւն տարտարոսական անբաղդ կինի միոյ՝ ձեռնթափ յամենայն յուսալեաց, հասեալ ի Գրիգորիայօլ, հաւաքեալ զկարևորսն գործոց նոցա, թողեալ զբազմաժամանակեայ հարկաւորսն անձնական, ի ձեռս օտարաց, զիմեալ գնացաք ի նորն նախիջեան, ուր գտաք զինքն գարքեպիսկոպոսն Եփրեմ ի 1809 թուականի Տէրունական ամի:

### Եւհրոզ անգամ գնալն իմ ի Ս. Պետրուրգ:

Հրամանաւ նորին Սրբազնութեան ժողովեալ զգործունեայ պատուաւոր Անձինս նոր նախիջեանու, դատաստանական օրինօք առաջադրութեամբ ընկալայ ի նոցանէ զքիպիտանցի զավզագիրն և զայլ կարևորսն, ամենայն միամտութեամբ պատրաստէր Սըրբազանն, և ի նոյն աւուրսն եկն ի կողմանէ Աթոռային Միարանութեանց Մահսէրաբեր հրաւիրակ Հոեթէոս եպիսկոպոսն, որ էր խարտաւիրակն մեր, ըստ զրեցելոյս աստ Տ թղթահամարին:

Ի Սեպտեմբեր ամսոյն ճանապարհորդեցաք ընդ նորոզ ընտրեալ վեհին և պարագայիցն, հասեալք ի Մոսկովֆ, զառաջինն տեսաք զգաղջութիւն օրինապահութեան վեհիս, որ կուսակրօն Յօհան աւագ սարկաւազի, յետ հրաժարեցման ի պաշտօնէ ամուսնանալոյն, ևս հրամանս ևտ մնալ ի պաշտօն եկեղեցական Լուսաւորութեան:

Հասեալք ի Ս. Պ. րուրգ, բաղդաւորութեամբ ներկայացաք Միարանութեամբ ընդ վեհին Հոեթէոս եպիսկոպոսին, մուշեցի Դուկաս վարդապետ, որ այժմ է ի Սուրբ Թաշ վանքն Ղրիմու, Ամենաբարեպաշտ Աղէսանդր Պալոպիչ Կայսրն քսանական ջերմեռանդութեամբ կարգաւ համբուրեաց զԱջս մեր ամենեցուն և մեք

փոխադարձ համբուրեցաք զսուրբ ձեռս կայսերական Մեծութեան: Ուրանօր ինամօք վերին, նուաստութիւն իմ եղէ բոնախօս թարգման ի մէջ կայսեր և վեհապետի, յետ շնորհաւորութեան Հայրապետական իշխանութեան և յուսատութեանց, հրամայեաց և զայս բան անկշռելիս գնահատութեանց:

«Որ ինչ հարկաւոր գործ ունիցիս պատկանաւոր իմուժս կասերական կառավարութեան, ուրախութեամբ ունիմ կատարել:

Ապա իսնարհութեամբ ըստ վերոյ գրեցելոյս, կրկին համբուրեալ զԱջ և զՁեռս միմեանց, անպատում ուրախամտութեամբ եկեալ ծանուցաք մերազանց, և վեհազն Աղայ Յովակիմին, որք գոհացեալ փառս մատուցին Աստուծոյ: Յետ այսորիկ խորհուրդ եղև ի վերայ անկշռելի շնորհաց սուրբ կայսերական բանին, ոչ մի ինչ առժամն զտանելով պատշաճաւոր խնդրելոյ, նուաստութիւն իմ սուաջարկեցի, Այժմ հարկաւոր է մեզ ի միտ ածել զպատահեալն ի Թօխաթ յաւուրս Դանիէլ Սրբազանի (որ կայ 13 թղթահամարի սորա) և խնդրեալ ի Նորին Մեծութենէ թէ հարկ է մեզ՝ զոմն առաքել ի Պօլիս ըստ վաղեմի սովորութեան մերում, ծանուցանել Ազգին և Պատրիարզին և ի Տէրութենէ Օսմանեան առնուլ զՊէրաթ և զՖէրման, ամենախոնարհաբար խնդրեմ հրամայել դեսպանին շնորհ ունել առ յինէն առաքեցեալ անձն:

Առ այս բան համակամ երեւցան վեհապետն և վեհազնեայն, բայց Հռէթէոս հրաւիրակ եպիսկոպոսն, գիտելով թէ ի Պարբուրգու գնալ հարկաւորի ի Պօլիս, այն իմս նուաստութեան հասանի վիճակ, վասն որոյ այլ և այլ առարկութեամբք ապախտ առնիլ հա զայն խորհուրդ, զի ի հասանիլ նոցա յԱթոռն կամ ինքն և կամ զայլ ոք ի բնիկ միարանից իւրեանց առաքեցցին, թէ և ինքն Հռէթէոսն հասեալ ի Թիֆլիզ վախճանեցաւ, բայց և Եփրեմ կաթուղիկոս յինն թուականէն մինչի երեսունն շարունակ քսան և մէկ ամ կաթուղիկոսութեամբ ոչ կարաց ունիլ յօսմանեան դրանէ զՊէրաթ Ֆէրման, և ոչ Յօհաննէս կաթուղիկոս, փոխանորդ նորացայսօր ժամանակի ըստ որում, յայնժամ փակեցին պօլսեցիք զնոյն այցելելի:

Նաև գրաւոր հարցումն եղև ի մինիստրական կառավարութենէ յայնժամ առ վեհապետն, թէ ոյժ կան ի կամս քո արժանաւորք կայսերական շնորհաց, և յինչ պատւոյ յարմարականք: Աստ է կշռել զուղղաբանութիւն և զխարզախութիւն Էջմիածնի միարանութեանց Մեծաց և Փոքերց:

Քանզի նոյն բարեհամբաւ Եփրեմ Արքեպիսկոպոսն, որ բազմահատոր գրութեամբ իւրով գրէր առ մեզ և առ այլս զհարազատ ծառայութեանց մերոց զովարանութիւն, որպէս տեսանեն յօրինակացն գրութեանց յընդարձակ պատմութեան մերում:

ի կշիռ գրութեանց և ի պատմութենէ յետ Ղուկաս կաթուղիկոսի վախճանին:

Այժմ գամենայն մոռացեալ գրնիկ միաբանս իւրեանց զՀռթէսն և զսարասաւոր իւր զՍտեփաննոս վարդապետն, Սրբոյն Աննայի երկրորդ աստիճանի արժանաւորս ասէ. և մեզ խաչ մի նշանակէ և վասն Ղուկաս վարդապետի (300) երեք հարիւր ուրլի դրամս, թէ մեք ևս ոչ էաք արժանի այնքանուոյ, բայց խոհական անձինք վասն Աստուծոյ կշռեսցեն զհոգի միաբանութեան էջմիածնի ընդ դրսեցի վարդապետաց և զքաղեալ պառզս նոցա՝ զարգասիս հոգւոց իւրեանց: Իբրև շնորհեցաւ ըստ նշանակութեան Ազգասէր վեհապետի, պարզեքն անցնիւրոց, ևս ներկայացաք միտքան առ սուրբ կայսրն, ըստ առաջին վերապատւութեան ընկալեալ փոխադարձ համբուրիւ զԱջ և զՁեռս իրիբաց ևս թարգմանութեամբ մերով եհարց կայսրն ցՀայրապետն, բաւական ևս ի շնորհաց մերոց, և թէ ունիս զայլ ինչ խնդիրս յինէն, ըստ որում և Հայրապետին շնորհեալ էր Բալեանթեայ խաչ ճակատի, և Առաջին աստիճան Աննայի, զարձոթ պղմէնթ, ծախս ճանապարհի, յայտնելով զբաւականութիւն և զշնորհակալութիւն, վերակրկնեալ համբուրիւ ըստ գրեցելոյս դարձաք ի բնակութիւնս հոգս կալնուլ ճանապարհորդութեան:

Առաջարկէին մեզ դնալ ընդ նոսա յաթոսն, որպէս թէ անդ շնորհատու լինիլ մեզ, թերևս եպիսկոպոսութեամբ, մեք անբաւականութիւն այն մեծի պատուոյ և Աստիճանի զմեզ ծանուցմամբ, նախ ընթաց եղաք ի յողջատին վիճակ մեր ի Գրիգորիպօր Եւ նորա ճոաքաղ առնելով զքաղաք և զգիւղս ուր յազգէ մերմէ կային, հազիւ յերկրորդի ամին հասին ի Թիւֆլիզ, ուր ամփոփեցին զՀռեթէոս եպիսկոպոս:

Բ. Վ. Ա.

(Շարունակելի)

